



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՌՈՒԲԵՐՏ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(1918—1920 թթ.)

ՌՈՐԵՐՏ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(1918—1920 ԹԹ.)

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի  
ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ

## Ն Ե Ր Ա Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Պատասխանատու խմբագիր՝

Ռուսաստանի Դաշնության  
Տնտեսագիտության, ֆինանսների և իրավունքի  
ակադեմիայի իսկական անդամ  
Հ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

### Իրախոսներ՝

Փիլիսոփայության դոկտոր Կ. Ա. ՄԻՐՈՒՄՅԱՆ  
Իրավագիտության թեկնածու Գ. Հ. ՍԱՅԱՐՅԱՆ  
Իրավագիտության թեկնածու Ա. Գ. ԷԳԻՆՅԱՆ

### Հավանավորներ՝

Արտաքին տնտեսական կապերի  
և կառավարման ինստիտուտ  
«Գլաձոր» կառավարման համալսարան

1918 թվականի մայիսի 28-ին «Դաշնակցու-  
թյուն» կուսակցության գլխավորած Հայոց Ազ-  
գային Կենտրոնական հորհուրդը իրեն հռչակեց  
«Հայկական գավառների գերագույն և միակ իշ-  
խանություն» (Հայ ժողովրդի պատմություն:  
Հատոր 7, Երևան, 1967, էջ 49): Իսկ 1918 թ.  
օգոստոսի 1-ին Երևանում բացվեց Հայաստանի  
հորհրդարանը, որը «նույն Ազգային հորհուրդն  
էր՝ անդամների եռապատիկ թվով» (Վ. Ա. Պառ-  
սամյան, Շ. Ռ. Հարությունյան. Հայ ժողովրդի  
պատմություն: Երևան, 1979, էջ 426):

Ինչպիսի՞ն էր Հայաստանի Առաջին Հանրա-  
պետության սոցիալ-տնտեսական դրությունը:

«Հակառակ աննպաստ պայմաններին, ներքին  
կյանքում էլ Հայաստանը հետզհետե ամրանում  
ու բարգավաճում էր,— գրել է վարչապետ Ս.  
Վրացյանը:— 1919 թ. ամռանը Հայաստանը ար-  
դեն կազմակերպված պետություն էր. երկիրը բա-  
ժանված էր 10 գավառների՝ համապատասխան  
վարչությանը ու դատաստանական իշխանությանը.  
բոլոր գավառներում կային հաշտարար դատավոր-  
ներ, որոնք, բացի Արդահանի գավառից, դատա-  
վարությունը անում էին հայերեն լեզվով: Երևա-  
նում կար շրջանային դատարան, Դատաստանա-  
կան պալատ, Սենատ: Մայիսի 28-ին Ղամարլու,  
Վաղարշապատ, Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարա-  
քիլիսիա, Ջալալ-Օղլի, Դիլիջան գյուղերը վերած-  
վեցին բաղաքի (Ս. Վրացյան. Հայաստանի Հան-

րապետութիւն: Փարիզ, 1928, էջ 320): Իսկ «...Կյանքի բոլոր ասպարեզներում դրութիւնը բարելավվում էր զգալապես: Ապրուստի պայմաններն էլ հետզհետե դառնում էին ավելի տանելի. հակառակ, որ ժողովուրդը ազահուստով ցամաքում էր ունեցած հացահատիկը, հացն ու կենսական միջոցները ավելի առատ էին, քան 1919 թ.» (Նույն տեղում, էջ 337):

Մյուս վարչապետը՝ Ալ. Խատիսյանը, գտնում էր, որ սոցիալ-տնտեսական կացութիւնը այնպիսին էր, որ Երկրորդ հանրապետութիւն իշխանավորները ընդամենը շարունակել են իրենց գործը. «Այսօր, տասը տարի ետքը այն օրնն, երբ ես հեռացա Հայաստանի կառավարական գործերն և երբ իշխանութիւնը տարբեր սկզբունքներով ու նպատակներով ղեկավարվող նոր մարդոց (բոլշեիկներին:— Խ. Ա.) ձեռքն է, կրնամ բսել, թե հին աշխատանքն է, որ այժմ ալ կշարունակվի, թերևս տարբեր ձևերով ու մեթոդներով: Այսպես, օրինակ, կրթական գործի մեջ Խորհրդային իշխանութիւնը կշարունակե այն համալսարանը, որ մենք հիմնեցինք Ալեքսանդրապոլի մեջ և հետո փոխադրեցինք Երևան: Երկաթուղային և խճուղիներու շինութիւնն մեջ բոլշեիկները կշարունակեն մեր սկսած ձեռնարկները: Ժողովրդի առողջապահութիւնն ասպարեզին մեջ անոնք կշարունակեն մեր սկսած պայքարը մալարիայի դեմ, կշանան հիմնել հիվանդանոցներ ու բժշկականայաններ: Զրանջներու և ոռոգման ծրագիրները մեզ մոտ մշակած ու շարունակվող սկսած էին: Մարդաբանական ծրագիրը ամբողջութեամբ պատրաստ էր դեռ մեր ժամանակ: Այսպես դեռ կրնանք շատ երկարել շարքը այն գործերուն, որոնք սկսանք մեր օրով և այս կամ այն եղանակով կշարունակվին այսօր ալ» (Ալ. Խատիսյան. Հայաստանի Հանրապետութիւնն ու զարգացումը: Բեյրութ, 1968, էջ 149):

Ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետութիւնը ծնվեց դժվարին պայմաններում՝ 1915 թ. Մեծ Եղեռն, երկարատև պատերազմ, 100 հազարավոր գաղթականութիւն, տնտեսական քայքայվածութիւն, ավերածութիւն, սով, համաճարակ, շորս կողմից թուրք-թաթարական, թշնամական օղակ և այլն, Ա. Հակոբջանը նշում է. «Այդուհանդերձ, հանրապետութիւնն տնտեսական կյանքում կատարվեցին նկատելի տեղաշարժեր ու դրական փոփոխութիւններ: Հայաստանն իր համեմատական կայունացմանը և բարգաւաճմանը հասավ Խատիսյանի վարչապետութիւնն շրջանում: Հանրապետութիւնն տնտեսական ծանր և քաղաքական անկայուն պայմաններով հանդերձ, կարճ ժամանակամիջոցում տեղի ունեցան տնտեսական և հասարակական-մշակութային դրական մի շարք փոփոխութիւններ: Եվ այդ իմաստով անհիմն ու զրպարտչական են խորհրդային պատմագրութիւնն մեղադրանքները: Սեվաջյեղով հանրապետութիւնն պատմութիւնը՝ դրական ոչ մի բան չէին տեսնում: Նույն կերպ, այժմ քննադատելով կոմունիստական բռնապետական, հակադեմոկրատական ուժերը, չի կարելի ասել, թե դրանց օրոք տնտեսական, մշակութային ոչ մի լավ բան չի ստեղծվել: Դա կույր քննադատութիւն է, որ պետք է մերժվի» (Ա. Հակոբջան. Հայաստանի Հանրապետութիւնն (1918—1920 թթ.): Երևան, 1992, էջ 11—12, 14):

Մինչդեռ (և դա «կույր քննադատութիւնն» չէ) երկրում փակվել էին արդյունաբերական գրեթե

բոլոր ձեռնարկութիւնները, հանքերը: Օրինակ, միայն Զանգեզուրում փակվելու պատճառով հարյուրավոր բանվորներ ցրվեցին գյուղերը, կամ էլ աշխատանք գտնելու համար դիմեցին արտադրողի (Հայ ժողովրդի պատմութիւն: Հատոր 7, էջ 60): Պղնձաարդյունաբերութիւնը, որի տեսակարար կշիռը նախապատերազմյան շրջանում կազմում էր Հայաստանի ամբողջ արդյունաբերութիւնի 45 տոկոսը, դադարել էր գոյութիւն ունենալուց: Զրոյ էին լցվել Ղափանի և Ալավերդու պղնձահանքերը, ավերակների էին վերածվել պղնձաձուլարանները: Հայաստանի արդյունաբերութիւնի համախառն արտադրանքը 1919 թ.՝ 1913 թ. համեմատ, կրճատվել էր ավելի քան 12 անգամ (Վ. Ա. Պարսամյան, Ե. Ռ. Հարութիւնյան. Հայ ժողովրդի պատմութիւն, էջ 427):

Հայաստանի Պետական ընդհանուր վիճակագրութիւնի զխաւոր բաժանմունքի հավաքած տվյալներով՝ 1918 թ. մարտից մինչև 1919 թ. մարտի մեկը Հայաստանից արտահանվել է (չհաշված բամբակը) ընդամենը 170 հազար փութ կամ 36032780 ուրբու արժողութիւնամբ ապրանք, որի հիմնական տեսակներն էին խմիչքները և կաշվեղէնը: Իսկ ներմուծվում էին՝ նավթամթերք, հացահատիկ, ալյուր, բրինձ, շաքար, ձուկ, օճառ, թեյ, բուսական յուղ, կտորեղեն, դեղորայք և այլն: «Ներմուծումը, համեմատած արտահանութիւնի հետ, ունի շատ մեծ տեսակարար կշիռ: Այսպէս... (ինն ամսում) Հայաստան է ներմուծվել ավելի քան 5,5 միլիոն փութ համախառն ապրանք, որի արժեքը, չհշտված տվյալներով, կազմել է մոտ 443 մլն ուրբի» (Ա.

Հակոբյան. Հայաստանի Հանրապետութիւն, էջ 16):

Վիթխարի շափերի էր հասել արժեզրկումը (ինֆլյացիան): Զերաշխաւորված թղթն զրամի արտադրութիւնը հասավ հսկայական քանակի: Եթե 1919 թ. օգոստոսի մեկից մինչև տարվա վերջը կար 362 միլիոն ուրբու շեկ, ապա 1920 թ. հունվարի 1-ից ապրիլի 1-ը բաց թողնվեց 832 միլիոն ուրբի, իսկ ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը՝ 7 մլրդ 32 միլիոն ուրբի:

Թղթն զրամը խիստ շափով արժեզրկվեց: Այսպէս, եթե 1920 թ. մարտին տաճկական մեկ ոսկի լիբր արժէր 3 հազար ուրբի, ապա ապրիլին՝ 4100 ուրբի, մայիսին՝ 6700 ուրբի, հունիսին՝ 6200 ուրբի, հուլիսին՝ 10000 ուրբի, օգոստոսին՝ 13000 ուրբի, սեպտեմբերին՝ 23000 ուրբի, հոկտեմբերին՝ 30000 ուրբի, նոյեմբերի սկզբին՝ 90000 ուրբի, նոյեմբերի վերջին՝ 150000 ուրբի (Հայ ժողովրդի պատմութիւն: Հատոր 7, էջ 57—58): 1920 թ. մարտին մեկ ամերիկյան դոլարն արժէր 500 ուրբի, մայիսին՝ 1000 ուրբի, իսկ նոյեմբերին՝ 28000 ուրբի: Շուկայում անասելի շափերով թանկացել էին ապրանքների գները: 1919 թ. մեկ կիլոգրամ հացն արժէր 5000 ուրբի, շաքարը՝ 50000 ուրբի (Վ. Ա. Պարսամյան, Ե. Ռ. Հարութիւնյան. Հայ ժողովրդի պատմութիւն, էջ 428): «...Հանրապետութիւնի տնտեսութիւնի արդյունաբերութիւնից: 1918 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. հունվարի մեկը հարկերից ստացված եկամուտները կազմել էին ընդամենը 30 մլն ուրբի, մինչդեռ ծախսերը ամսական կազ-

մել էին միջին հաշվով 17,5 մլն ոււրլի» (Նույն տեղում, էջ 15):

Տնտեսական պայմանների վստթարացման հետևանքով ստեղծվել էր պարենային սուր ճգնաժամ: Երկրում տարածվել էին սովն ու համաճարակը, «որոնց զոհ գնաց բնակչության ավելի քան 1/3-ը: Պաշտոնական տվյալներով 1919 թ.: միայն Երևանի փողոցներից հավաքվել է 9055 դիակ: Էլ ավելի ծանր էր դրությունը շրջաններում ու գյուղերում: Որոշ շրջաններում (Թալին, Ապարան, էջմիածին, Նոր Բայազետ, Սուրմալու և այլն) մահացավ բնակչության կեսից ավելին» (Նույն տեղում):

Երբ խնդիրը վերաբերում էր ժողովրդի վիճակի բարելավմանը կամ լուսավորության գործի կառավարմանը՝ պետական դրամարկդի դոնները փակվում էին (Հայ ժողովրդի պատմություն: Հատոր 7, էջ 53):

Ահա թե ինչ է գրել Հայաստանի Հանրային կրթության և արվեստի նախարարության դպրոցների բաժնի վարիչը 1919 թ. նոյեմբերի 8-ին. «Դպրոցները չեն վերաբացվում, որովհետև փող չկա, ուսուցիչներն իրենց դպրոցները թողնում են... որովհետև փող չկա... բայց սխալվում են ասելով՝ փող չկա. փող չկա, բայց փող չկա միայն տարրական դպրոցի, փող չկա միայն լուսավորության գործի համար» (Նույն տեղում, էջ 199—200):

Երկրում անիշխանություն էր: «Այն խոսքը, թե՛ ով առավուտ քնից շուտ վեր կենա, նա է իշխանության տերն ու տնօրենը, այս պարագայում կարելի է հանգիստ խղճով թույլատրել, որ այդ վարկաբեկիչ խոսքը վերագրվի Հայաստանի Հանրապետական կառավարությանը», — այսպես

է գրել «Աշխատանք» թերթը՝ «Անիշխանություն» վերտառությամբ իր հոդվածում (Աշխատանք, 1919, 25 փետրվարի):

Իսկ «Հայաստանի աշխատավոր» (1919, թիվ 81) նշել է. «Մեր պաշտոնեություն 90 տոկոսը զեղծարար է: Զեղծում ու կեղծում են ամենքը, ալան-թալան են անում բոլորը, ովքեր ծույլ չեն, որովհետև ողբան շատ են զեղծում ու հափշտակում՝ այնքան բարձրանում է նրանց աստիճանն ու պատիվը»:

Ալեքսանդրապոլի հասարակության ներկայացուցիչները 1920 թ. փետրվարին բողոք են հղել կառավարության ներկայացուցչին՝ դաշնակցական պատժիչ ջոկատի անօրինականությունների դեմ: Բողոքում ասված էր. «Այն կաշառքները, սոսկալի ծեծն ու ճնշումը, մարդկանց վախեցնելը երբեք չենք մոռանա մենք, մենք այս դրությունը չենք եղած, այսքան կաշառք չենք տված» (Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան, 1932, էջ 201): Իսկ Կարսի նահանգապետը Կառավարության նախագահին ուղղված գեկույցագրում նշել է. «Մարդիկ վարակված են թալանելու, ապահովվելու և ապա հեռանալու տենչով...: Մարդկանց մեջ բթացել է երկյուղը դեպի քրեական պատիժը...: Ոճիրը պարփակում է իր մեջ քաղաքական, տնտեսական և իրավական բացատրություններ և այդ բարդ ու խճճված պայմաններում է մեր օրերի քրեական տրամադրությունների գաղտնիքը: Բացի այդ, գաղտնիք չէ այն, որ պետական հայացք, պետական աշխարհայեցողություն մենք չունենք» (Նույն տեղում, էջ 129, 131):

Նույնիսկ կովկասահայ բուրժուազիայի ներկայացուցիչները չէին կամենում կապիտալ ներդնել Հայաստանի տնտեսության մեջ: Քանի որ, ինչպես այդ հարցին նվիրված 1919 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում գումարված հայ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովում հայտարարեց արդյունաբերող Մայիլյանը, «ժամանակակից Հայաստանում բացակայում է գույքի և անձի ապահովություն» (Հայ ժողովրդի պատմություն: Հատոր 7, էջ 55): Իսկ խորհրդակցության մի այլ մասնակից՝ Մ. Բունիաթյանը, հայտարարել էր, թե «Հայաստանից հայ արդյունաբերողներն ու մասնագետներն իրենք չեն, որ փախչում են, այլ նրանց մեր կառավարությունն է փախցնում իր նեղ կուսակցական գործելակերպով» (Նույն տեղում):

Տիրող իրավիճակը կարսի նահանգապետը հետևյալ կերպ է բնութագրել. «Չգիտեմ ի՞նչ է մտածում այդ մասին կենտրոնական կառավարությունը. ես երկրի դրությունը կատաստրոֆիկ եմ համարում» (Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում, էջ 134):

Հովհ. Քաջազունին իր «23 Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքում (Վիեննա, 1973, էջ 38) գրել է. «Պառլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձև էր առանց պարունակության: Պետական հարցերը քննության էին առնվում ու լուծվում դռնփակ, դաշնակցական ֆրակցիայի սենյակում ու ապա հայտարարվում պառլամենտի ամբիոնից: Իրոք չկար և պառլամենտական ֆրակցիա, որովհետև սա դրված էր դաշնակցությանը բյուրոյի խիստ հսկողության ու պարտավոր էր կատարելու նրա հրամանները: Չկար և կառավարություն. սա ևս ենթարկվում էր բյուրոյին, բյուրոյի մի տեսակ գործադիր մարմինն էր պետության մեջ: Բու-

շևիկյան սիստեմում էր սա: Բայց այն, ինչ-որ բուշևիկները անում են հետևողականորեն ու բացահայտ, մենք աշխատում էինք քողարկել դեմոկրատական ձևերի տակ»: Եվ ավելացրել. «Եթե ուզենանք մի ընդհանուր գնահատում անել արդյունքների՝ հանրապետության անկախությունը հռչակելուց հետո, պետք է ասենք, որ պարծենալու շատ բան չունենք: Պետք է ասենք, որ մեզ վիճակված բեռը՝ պետություն կաղմելու ու պետական կյանքը ղեկավարելու գործը, մեր ուժերից շատ վեր է եղել:

Անհերքելի ճշմարտություն է, որ Հայաստանի դրությունը եղել է բացառիկորեն ծանր ու մեր աշխատանքի պայմանները՝ բացառիկորեն անբարեհաջող: Բայց անհերքելի է և այն, անհերքելի է գոնե ինձ համար, որ սրա վրա ավելացել է նաև մեր սեփական անկարողությունը, պետական գործեր վարելու անձեռնահասությունը:

Եթե ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, ապա ուրեմն մենք միանգամայն անպետք կառավարիչներ ենք եղել, որովհետև հենց այդ նախատեսելու ընդունակությունն է, որ մենք չենք ունեցել բնավ:

Մենք շարունակ սխալված ենք եղել մեր հաշիվների մեջ ու շարունակ անակնկալների հանդիպած, անակնկալներ միայն մեզ համար, որովհետև չենք գիտակցել, նախատեսել:

Մեր ամենամեծ թուլությունը այդ է եղել:

Ապա չենք ունեցել որոշ ու հստակ գիտակցություն մեր անելիքների մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տևողական, հետևողական: Միտում, գործել ենք կարծես հանկարծակի ու պատահական ներշնչումների տակ, տատանվել ենք, պատից-պատ ընկել՝ կեսկուրորեն շոշափելով ոտներին տակի հողը:



Չենք ճանաչել ու հաճախ գերագնահատել ենք մեր կարողության չափը, չենք հասկացել դժվարությունների մեծությունը, արհամարհել ենք հակառակ ուժերը և թեթևամտության աստիճանի անփուլթ ենք եղել մեզ սպառնացող վտանգի հանդեպ: Կտրուկ ենք եղել այնտեղ, ուր պետք էր ծայրահեղ զգուշություն, ու անվճռական այնտեղ, ուր պետք է կտրուկ լինեինք:

Չենք կարողացել տարբերել պետությունը կուսակցությունից ու կուսակցական մտայնություն ենք մտցրել պետական կյանքի մեջ: Պետական մարդիկ չէինք մենք:

Պակաս անբարեհաջող պայմաններում թերևս կարողանայինք սխալներով հանդերձ՝ գտնել վերջապես ճամփան, ոտներս մի տեղ ամրադնել: Իայդ այն սոսկալի պայմանների մեջ՝ մենք չէինք, որ պիտի կարողանայինք առանց որևէ հենարանի, միայն մեր ուժերին թողած, կատարել այդ հերկուլեսյան աշխատանքը» (Նույն տեղում, էջ 53):

## I. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՆՎԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՄԲ

1918 թվականի գարեանը Երևանում, Դիլիջանում և Էջմիածնում ստեղծվեցին Հեղափոխական տրիբունալներ: Նպատակ ունենալով արմատախիլ անել հանցավորությունն ու անարխիան՝ նրանք գործել են «վճռական, բոլորովին չհոգալով գործի քննությունը ապահովել դատավարական երաշխիքներով: Դատավճիռները վերջնական էին, և չէին թույլատրվում ոչ ապելյացիա, ոչ կասացիա (վճռափոխություն և բեկանում:— Ի. Ա.):

Այսպիսով, տասնյակ ու հարյուրավոր մարդկանց բախտը ամբողջովին հանձնված էր մի քանի անձանց ձեռքը, որոնք, գործելով որպես դատավորներ՝ անսահմանափակ լիազորություններով, շունեին ոչ իրավաբանական պատրաստվածություն, ոչ կյանքի ու դատական փորձ»:

Այսպես է գրել Արդարադատության նախարար Ս. Հարությունյանը 1918 թ. դեկտեմբերին՝ «Հաստատանի տարածքում գործող Հեղափոխական տրիբունալների վերաբերյալ գործերով օրինագծի» կապակցությամբ (ՀՀ Պետական պատմական կենտրոնական արխիվ, ֆ. 404, ց.1, գ. 71, թ. 1): Այդ տրիբունալները «ոչ միայն չկարողացան ար-

մատախիլ անել հանցավորությունն ու անարխիան, այլև իրենք՝ անարդար ու բացահայտ կանխակալ դատավճիռներով, վերջնականորեն իրենց վարկաբեկեցին և անմտածված որոշումներով ապարարոյականացրին ազգաբնակչությանը» (։ ույն տեղում)։

Այդ տրիբունալները վերացվեցին 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով։ Նույն օրենքով Հայաստանի տարածքում դատական իշխանությունը պատկանում էր Հաշտարաբ դատավորներին, Օկրուգային դատարաններին, Դատաստանական պալատին և Հանրապետության Սենատին։ Հաշտարաբ դատավոր միանձնյա իշխանություն էր, իսկ Օկրուգային դատարանները, Դատաստանական պալատն ու Սենատը՝ կոլեգիալ (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 195)։ Դեկտեմբերի 6-ի օրենքով (Օրենք հա. 53) Հայաստանի տարածքում մտցվեց երդվյալ ատենակալների ինստիտուտը (Ֆ. 201, ց. 1, գ. 280, թ. 24)։

Երևանում հիմնված Դատաստանական պալատը բաղկացած էր Քաղաքացիական և Քրեական դեպարտամենտներից (նախագահ և 3-ական անդամ) (Ֆ. 404, ց. 1, գ. 68, թ. 2)։ Ընդհանուր դատական համակարգում հանդես գալով որպես երրորդ օղակ, Դատաստանական պալատն ապիլյացիոն ատյան էր (վճռափոխ դատարան)։ Դատախազական հսկողությունը կից էր Դատաստանական պալատին։ Կար նաև կարևորագույն գործերի ֆենիչի ատյան, Դատի տալու ատյան և Հա-

տուկ ներկայություն։ Դատաստանական պալատն անմիջականորեն ենթարկվում էր Արդարադատության նախարարությանը, ղեկավարվում ցարական Ռուսաստանի օրենքներով և Հայաստանի Խորհրդարանի կողմից ընդունված օրենքներով։

Օկրուգային դատարանն իրականացնում էր անմիջական հսկողությունը Հաշտարաբ դատավորների նկատմամբ, իսկ բարձրագույն հսկողությունը՝ Հանրապետության Սենատը և Արդարադատության նախարարը։

Ծթն Հաշտարաբ դատավորների, Օկրուգային դատարանների և Դատաստանական պալատի իրավասությունները սահմանափակվում էին հատուկ տեղամասերով ու օկրուգներով, Հանրապետության Սենատի իրավասությունը տարածվում էր ողջ տարածքի վրա։

Հաշտարաբ դատավորները, Օկրուգային դատարանները և Դատաստանական պալատը քննում էին գործերն ըստ էության։ Հանրապետության Սենատը, հանդիսանալով վճռաբեկ բարձրագույն դատարան և շուծելով գործը ըստ էության ընդհանուր դատավարական կարգով, հետևում էր, որ պեսսի «պահպանվեր օրենքի ճիշտ ուժը և դրա միատեսակ կատարումը հանրապետության բոլոր դատական հաստատությունների կողմից» (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 195)։ Այն բաղկացած էր երկու դեպարտամենտներից՝ Քաղաքացիական և Քրեական գործերի «որոշումները վերացնելու խնդիրները լուծելու համար» (Ֆ. 199, ց. 1, գ. 33, թ. 136)։

Յուրաքանչյուր դեպարտամենտ ուներ նախագահ  
և 3-ական անդամ (Ֆ. 404, ց. 1, գ. 68, թ. 2):

Մանր հանցագործությունների անը պահանջում  
էր դիմել կտրուկ միջոցառումների: Ահա թե ինչ է  
գրել 1918 թ. սեպտեմբերի 6-ին Երևանի Օկրուգա-  
յին Դատախազը Արդարադատության նախարա-  
րին. «Երկրի օրինական իշխանության կրողները  
պետք է ընդունեն ամենավճռական միջոցները՝  
հանցավորության դեմ պայքարելու համար: Այս  
միջոցառումներում առաջինը, առավել գործուն-  
ջան և նպատակահարմարը, հանդիսանում է խիստ  
քրեական պատիժներ կիրառելը՝ հնարավորին շափ  
արագ գործելու պայմանով» (Ֆ. 201, ց. 1, գ.  
38 (2), թ. 14):

Անդրադառնալով դատական իշխանության  
գործունեությանը, Արդարադատության նախարար  
Ս. Հարությունյանը 1919 թ. հունիսին գրել է. «Հա-  
յաստանի Հանրապետության տարածքում հանցա-  
վորությունը... խիստ զարգացել է: ...Ամենուրեք  
կուտակվել են մեծ թվով գործեր, որոնք քննու-  
թյուն են պահանջում: Ընդ որում, այդ գործերում  
քիչ չեն այնպիսիները, որոնք իրենց բարդությամբ  
ու հասկերակային իրավիճակով քննիչից պահան-  
ջում են մեծ պատասխաստվություն և հնարք» (Ֆ.  
401, ց. 1, գ. 70, թ. 10): Օրինակ՝ միայն Բասար-  
գեշարի քննչական տեղամասում (1919 թ. նոյեմ-  
բեր ամսի դրությամբ) կար 367 քրեական գործ,  
իսկ դատարան չէր ուղարկվել և ոչ մեկը (Ֆ. 206,  
ց. 1, գ. 117, թ. 15): Յուրաքանչյուր Օկրուգային

դատարանում մտցվեց կարևորագույն գործերի  
քննիչի պաշտոն: Արդարադատության նախարա-  
րությանը ենթակա դարձան Օկրուգային դատա-  
րանները, Հաշտարար դատավորները, քննիչները  
և դատախազական հսկողությունը իրականացնող  
անձինք (Ֆ. 199, ց. 1, գ. 33, թ. 49):

Նախարարների Խորհրդի 1919 թ. հունիսի 6-ի  
որոշմամբ Դիլիջանի գավառում մտցվեց զինվո-  
րական դրուբյուն: Բնակչությանն ուղղված իր  
հայտարարության մեջ Հյուսիսային ջոկատի պետ  
Գենեթալ-մայոր Բաղդասարովը տեղեկացնում էր,  
որ այն անձինք, որոնք մեղավոր կճանաչվեն կո-  
լտպուտի, դասալքության և իշխանությանը դիմա-  
դրություն ցույց տալու մեջ, կպատժվեն զինվորա-  
կան ժամանակի օրենքներով, ընդհուպ մինչև մա-  
հապատիժ: Այդ նպատակով ստեղծվեցին ռազ-  
մադաշտային դատարաններ (Ֆ. 201, ց. 1, գ.  
180, մաս Ժ, թ. 29):

1919 թ. հունիսի 8-ին Նախարարների Խոր-  
հուրդը, ի լրումն 1919 թ. մայիսի 28-ի Ներման  
մասին ակտի, որոշեց.

1. Ազատագրկման ձևով նշանակված բոլոր  
պատիժները և տուգանքները, որոնք արձակվել են  
մինչև 1919 թ. մայիսի 28-ը կատարված հանցա-  
գործությունների ու զանցանքների համար, կրճա-  
տել կիսով շափ:

2. Բոլոր այն անձանց, որոնք մինչև 1919 թ.  
մայիսի 28-ը կատարված հանցագործությունների  
համար դատապարտվել են մահապատիժի, մահա-

պատիժը փոխարինել տաժանակիր աշխատանքով՝ 15 տարվա ժամկետով:

3. Բոլոր այն անձանց, որոնք մինչև 1919 թ. մայիսի 28-ը կատարված հանցագործությունների համար դատապարտվել են ցմահ տաժանակրության, պատիժը փոխարինել տաժանակրությամբ՝ 12 տարվա ժամկետով:

4. Քաղաքացիական գերատեսչության բոլոր անձանց, որոնք մինչև 1919 թ. մայիսի 28-ը կատարված հանցագործությունների ու զանցանքների համար դատապարտվել են հատուկ պատիժների, պատիժները փոփոխել:

5. Զինվորական գերատեսչության բոլոր անձանց, որոնք մինչև 1919 թ. մայիսի 28-ը դատապարտվել են ուղղիչ աշխատանքների, պատիժները փոփոխել (Ֆ. 210, ց. 1, գ. 1, թ. 84):

Վարչատարածքային առումով Հայաստանը բաժանված էր չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց: Նահանգներն, իրենց հերթին, բաժանված էին գավառների, որոնց թիվը օկրուգների հետ միասին հասավ շուրջ հրկու տասնյակի: Օրինակ՝ Երևանի (71280), էջմիածնի (82307), Նոր Բայազետի (84883), Դիլիջանի (42000) և Դարալագյազի (43862) գավառներ: Գավառներում ստեղծվեցին Հաշտաբար տեղամասեր և Քենչական տեղամասեր (Ֆ. 206, ց. 1, գ. 29 թ. 13): Օրինակ՝ Երևանի գավառում կար 4 հաշտաբար տեղամաս և 4 քննչական տեղամաս:

Միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի համաձայն (հոդված 25), «Միլիցիան պարտավոր է մեկուսացնել անզգայության աստիճանի հարբածներին, հոգեկան հիվանդներին և այլ անձանց, եթե նրանց ազատ մնալը անմիջական վտանգ է սպառնում իրենց և իրենց շրջապատին» (Ֆ. 201, ց. 1, գ. 192, մաս Ժ, թ. 4):

Այս օրենքի պահանջներին համապատասխան կատարվում էր մարդկանց մեկուսացումը հասարակությունից: Գւյուրթյուն ունեւ «հասարակության անվտանգության համար վնասակար տարր» հասկացությունը:

Տասնյակ ու հարյուրավոր մարդիկ կարող էին ենթարկվել (և ենթարկվում էին) բանտարկության: Այդ մասին են վկայում արխիվային տվյալները:

Օրինակ՝ Երևանի գավառի կոմիսար Ամիրխանովի 1919 թ. հունիսի 30-ի որոշմամբ Քանաքեռ գյուղի բնակիչ Հունան Տեր-Պետրոսովը ենթարկվել է բանտարկության «որպես թշնամական մի կուսակցության ղեկավար», իսկ Աննա Քոչարյանցը՝ «որպես հասարակական անվտանգության համար վնասակար տարր»: Ղարաքիլիսի գավառի կոմիսար Տեր-Սարգսյանի որոշման համաձայն Աթան գյուղի բնակիչներ Ավետիք Մեծումյանը ու Վասիլ Քոչարյանցը «որպես հասարակական անվտանգության համար վնասակար տարր» ենթարկվել են մեկ ամսվա բանտարկության (Ֆ. 201, ց. 1, գ. 180, մաս Ժ, թթ. 126—127): Դիլիջանի գավառային կոմիսար Սարատիկովը, «նկատի ու-

նենալով որ գյուղի բնակիչ Բագրատ Հարությունովը սիստեմատիկաբար զբաղվում է մանր գողությամբ, դրամաշորթությամբ... և քանի որ նրան դատական կարգով պատասխանատվության կանչելու համար չկան բավարար հանցանշաններ», նրան բանտարկել է «Դիլիշանի բանտում» (Նույն տեղում): Ալեքսանդրապոլի գավառային կոմիսար Լորեցյանը իր 1919 թ. նոյեմբերի 6-ի որոշումով Մեծ Սարիար գյուղի բնակիչ Սեդրակ Հովսեփյանին ենթարկել է բանտարկության, քանի որ նա «մերկացվում է գողութուններ, շորթում և այլ հանցագործություններ կատարելու մեջ», և դատարկել է «հանցագործությունները կանխելու նպատակով» (Ֆ. 201, ց. 1, գ. 180, մաս Ժ, թ. 181): Ներքին գործերի նախարար Գյուլխանդարյանը 1919 թ. սեպտեմբերի 18-ին էջմիածնի գավառի Քյայաջան գյուղի բնակիչ Ղազար Սիմոնյանցի (Քուրդ Ղազո) նկատմամբ կայացրել է հետևյալ որոշումը. «Գտնելով, որ նա անվատահերի և վնասակար տարր է, ենթարկել 3 ամսվա բանտարկության Երևանի կենտրոնական բանտում» (Ֆ. 201, ց. 1, գ. 284, մաս Ժ, թ. 299): Նույնանման որոշում է կայացվել նաև Երևանի բնակիչներ Գրիշա Հարությունովի, Մովսես Մովսիսյանի և Վիգեն Նավասարդյանի նկատմամբ (Նույն տեղում, թ. 314):

Այսպիսով, իշխանությունների հնարավոր կամայականությունը օրինականացված էր, և ցանկացած մարդուն ազատությունից զրկելու իրա-

վունքը մատուցվում էր որպես նրանց նկատմամբ հոգատարություն, քանի որ «նրանց ազատ մնալը անմիջական վտանգ է սպառնում իրենց և իրենց շրջապատին»: Իշխանությունների տեսակետից՝ հասարակությունը բաղկացած էր «հարբածներից, հոգեկան հիվանդներից և այլ անձանցից»:

Պարենի խիստ նգնաժամը առանձնապես ծանր է անդրադարձել դատապարտյալների վրա: Ըստ Արդարադատության նախարարի, «Այն ժամանակ, երբ միսը արժի 7—8 ուրբլի, բրինձը՝ մինչև 12, ճարպը՝ 4, հացը՝ 7—8 ուրբլի և օր-օրի թանկանում են, յուրաքանչյուր բանտարկյալի վրա կատարվող ծախսը չի գերազանցում 2,5 ուրբլուց: Դրա հետևանքով բանտարկյալները հյուսվում են ֆիզիկապես, հիվանդանում՝ թերսնումից և տալիս մահացություն բարձր տոկոս: Եղել են դեպքեր, երբ սովի հողի վրա ապստամբությունները կարող էին վերածել խռովության: Եղել են դեպքեր, երբ Դատական քննիչները, Հաշտարար դատավորները և Օկրուգային դատարանը խափանման միջոց ընտրելիս չեն ձգտել նրանց բանտ ուղարկել, քաջ գիտակցելով, որ բանտարկել՝ նշանակում է մարդուն դատապարտել մահվան: Մարդկային ու դատարանական խիղճը վեր է կանգնել ձևականություններից, և բանտարկելու փոխարեն կիրառվել են խափանման այլ միջոցներ» (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 21):

Իսկ ահա ինչ է գրել Հայաստանի Բանտային տեսուչ Յառալուլը 1919 թ. հունիսի 29-ին. «Թեև

սահմանված հաստիքներով Հայաստանի տարածքում պետք է գործեր 17 բանտ, գործում են միայն 9-ը: Հարցադրումը և գործի վարույթն այնքան սխալ են եղել, որ բանտերը իրենցից ներկայացրել են վայրեր՝ մահվան դատապարտվածների համար: Թեև կառավարությունը բանտերը պահելու և բանտարկյալների սնունդը հոգալու համար բաց է թողել անհրաժեշտ զուամարներ, սակայն գործը ոչ ճիշտ և առանց հսկողության վարելու հետևանքով բանտերում մոլեգնում է սովը, և բանտարկյալների մեջ հաճախակի էին մահացությունները: Դատախազական հսկողությունն ու քննչական իշխանությունները զրկված են եղել հանցագործներին կալանքի տակ պահելու հնարավորությունից՝ գիտակցելով, որ բանտարկել՝ նշանակում է մահվան դատապարտել մարդուն: Ուստի հանցագործները մնում էին ազատության մեջ, և դատական ապարատը զրկված էր ճիշտ գործելու հնարավորությունից... Ամենուր մոլեգնում էին տիֆը և համաճարակային հիվանդությունները: Բանտ ընկնելու առաջին իսկ օրից բանտարկյալները անընդհատ աղերսում էին իրենց գնդակահարել, քանի որ այդպիսի պայմաններում գտնվելը անտանելի էր: Ուրբառով ինձ հայտնի է, քննիչները և այլ իշխանությունները անգամ չէին փորձում բանտ մտնել՝ վախենալով վարակից: Կալանավորները պահվում էին առանց սեռատարիքային առանձնահատկությունների հաշվի առնելու՝ անշափահաս-

ները նստած էին մեծերի հետ, կալանավոր կանայք շփվում էին տղամարդկանց հետ և այլն» (Ֆ. 199, ց. 1, գ. 91, թ. 22):

Դատաբաններում ֆեակալն գործերի ֆանակր գերակշռում էր ֆաղաֆացիական գործերի ֆանակին:

Կարսի քաղաքացիական նահանգապետը մարզը երկու քննչական տեղամասերի բաժանելու կապակցությամբ Երևանի Դատաստանական պալատի ավագ նախագահին 1919 թ. դեկտեմբերի 17-ին գրել է հետևյալը. «Ամեն ինչ շրջվել է գլուխն ի վար: Այժմ քաղաքացին ինքը շունի հացի ավելորդ փշրանք...: Եվ եթե սովի, կարիքի ու այլասերված բարքերի պայմաններում մարդիկ հրաժարվում են ներպայանալ (որպես վկա քննիչի մոտ: — Ռ. Ա.), ապա հազիվ թե կարելի է զարմանալ...: Չեմ արդարացնում և այս իշխանությունը: Մարդ չեմ գտնում նույնիսկ մեծ լամպով: Ավելի շատ է քննադատությունը, ավելի շատ են ծածուկ վայրեր որոնողները, միայն թե ոչ գործը և ոչ էլ երկրի ու ժողովրդի շահերը...: Մենք պետք է երկրում հաստատենք օրինականություն, սովորեցնենք կարգ ու կանոն և ճշմարտություն» (Ֆ. 206, ց. 1, գ. 107, թ. 47):

1920 թ. մարտ ամսին Զինվորական դատախազն առաջարկել է օրենքի այսպիսի մի նախագիծ. «Նկատի ունենալով հանցավորության շափազանց մեծ աճը, Հայաստանի Հանրապետու-

թյան տարածքը... համարել գինվորական դրու-  
թյան մեջ» (Ֆ. 210, ց. 1, գ. 1, թ. 90):

Իսկ ահա ինչպես է նկարագրել քրեածին իրա-  
վիճակը քննիչ Իսաևը 1920 թ. ապրիլին. «Օրեցօր  
իմ դրուժյունն այստեղ անտանելի է դառնում:  
«Մաուզերիզմը», որն առաջ հետապնդվում էր,  
փխստ տարածում է ստացել: Չի լինում մի օր, որ  
չկատարվեն սպանություններ, կողոպուտներ, գո-  
ղություններ: Ոչ այնքան վաղուց, երբ մի միլի-  
ցիսների քրոջ կյանքի դեմ հանցափորձ կատար-  
վեց, վերջինիս հայրը եկավ ինձ մոտ, որպեսզի  
ես ձեռնարկեմ անհրաժեշտ միջոցներ: Եվ քանի  
որ դա վաղ առավոտյան էր, ժամը վեցին, և ես  
քնած էի, հենց որ եկա, նա արդեն հետ էր գնա-  
ցել: Այդ մասին իմանալով՝ նրան ճանապարհին  
սպանել են: Ես միջոցներ ձեռնարկեցի՝ մարդա-  
սպաններին ու հանցակիցներին ձերբակալելու  
համար: Նրա՛յք թաքնվում էին, սակայն նորից  
հայտնվեցին, և առաջին իսկ օրվանից սկսվեցին  
սպանալիքները...» (Ֆ. 206, ց. 1, գ. 117, թ.  
140):

1920 թ. մայիսի 24-ին մինիստր-նախարար Հ.  
Օհանջանյանի ստորագրությամբ հրապարակվեց  
Օրենք՝ «Հասարակության հացի անմիջական կա-  
րիքները հոգալու մասին», որտեղ ասվել է.  
«1. Հայաստանի Հանրապետության յուրաքան-  
չյուր քաղաքացի մինչև սույն տարվա օգոստոսի  
1-ը իրավունք ունի իր մոտ պահելու ընտանիքի  
ամեն մի շնչին 3 փութ հացահատիկ կամ ալյուր:

(Մանոթություն՝ հացահատիկ ասելով հասկաց-  
վում է ցորեն, գարի, հաճար, բրինձ, եգիպտա-  
ցորեն): 2. Ով որ այս քանակից ավել հացահա-  
տիկ կամ ալյուր ունի, յուրաքանչյուր վայրում  
սույն Օրենքը հրատարակելու օրից սկսած երկու  
շաբաթվա ընթացքում պարտավոր է հայտնել տե-  
ղական կոմիսարին: 3. Յուրաքանչյուր շնչին թող-  
նելիք երեք փթից ավելի ամբողջ հացահատիկը  
կամ ալյուրը հանձնվում է կառավարութայնը, որի  
փոխարժեքը կառավարութայնը պարտավոր է  
վճարել կամ դրամով և կամ հունձից հետո՝ հացա-  
հատիկով: ...7. Եթե երկու շաբաթվա ընթացքում  
ցույց չտրվի սույն Օրենքի մեջ հիշված քանակից  
ավելի հացահատիկն ու ալյուրը, գտնվելու դեպ-  
քում կառավարութայնը պիտի գրավի առանց որևէ  
հատուցման և հանցավորին ենթարկի պատժի՝  
բանտարկության՝ մինչև երեք ամիս և մինչև  
100.000 ռ. տուգանքի» (Ֆ. 201, ց. 1, գ. 490, թ.  
239):

Երկրի սոցիալ-տնտեսական ու ֆաղափական  
բարդ իրավիճակը նպաստել է հանցավորու-  
թյան աճին, իսկ հանցավորությունը, իր հեր-  
թին, խաբխել սոցիալ-տնտեսական ու ֆաղա-  
փական հիմքերը:

Երևանի Օկրուգային դատարանի Դատախա-  
ղը դատապարտյալներ Նշան Մեծատուրյանի,  
Վանո Տեր-Հովհաննիսյանի և Ստեփան Ավե-  
տիսյանի խնդրանքների կապակցությամբ, որոն-  
ցում նրանք խորհրդարանից հայցել են իրենց

ներում շնորհել, գրել է. «Պատերազմի ու սոսական Մեծ հեղափոխության հենց սկզբից մեր դժբախտ ժողովուրդը կրում է անհավանական տառապանքներ ու զրկանքներ: Չլսված, հրեշափոր մեծ թվով զոհերի գնով հասավ անկախության և այժմ կերտում է իր ինքնուրույն կյանքը: Երնարարության ու վերածնունդի ճանապարհին հայ ժողովուրդը հանդիպում է բազում խոչընդոտների: Դրանցից մեկը՝ օր-օրի աճող հանցավորությունն է, որը ընդունում է վիթխարի չափեր ու, վերաճելով, ստանում է հրեշափոր բնույթ: Երկրում ավերածությունը մեծացնում է հանցավորությունը, իսկ հանցավորությունը մեծացնում է ավերածությունը: Այս երկու երևույթները, մեկը մյուսին նպաստելով, մեր կյանքը դարձնում են անտանելի, և անհրաժեշտ են հերոսական ճիգեր, որպեսզի նվազեցվի հանցավորությունը և կանգնեցվի ավերածությունը: Կառավարությունը, որպես երկրում կարգ ու կանոն հաստատող պատվար, պետք է ներդնի իր բոլոր ուժերը՝ հանցավորության դեմ պայքարելու համար, և նրա գլխավոր խնդիրը պետք է լինի հասարակությունից հանցավոր տարրի վերացումը: Այդ խնդրին պետք է ծառայեն վարչակազմը և դատարանը: Մինչդեռ մեր վարչակազմը հեռու է լավ լինելուց: Քանի որ՝ միլիցիայի կազմը համալրված է պատահական մարդկանցով, պաշտոնյաները բացարձակապես չեն գտնվում իրենց բարձրության վրա:

Նրանք ոչ միայն ի վիճակի չեն կատարելու իրենց ֆունկցիաները, այլև չեն հասկանում իրենց առջև դրված խնդիրները, որի դրսևորումներից մեկն է հանդիսանում կալանավոր, նախկին միլիցիոններ Նշան Մեծատուրյանի խնդանքը՝ որպես մեր միլիցիայի շկայացման վառ օրինակ...: Այժմ ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, որ յուրաքանչյուր դատապարտյալ, որը հնարավորություն ունի լացակումած խնդրանք գրելու, կարող է հույս ունենալ ոչ միայն դատարանի կողմից պատիժը մեղմացնելու, այլև առհասարակ ազատվելու պատժից: Դատապարտյալները մեծ մասամբ խորհրդարան են դիմում ոչ թե նրա համար, որ գիտակցել են իրենց մեղքը, զղջացել են և ուղղվել, այլ որովհետև ուրիշ տեղ չունեն դիմելու...: Նախկին կուսակցական գործունեության մասին ոչ մի հիշատակում չի կարող առիթ ծառայել՝ սպանության կամ կողոպուտի համար պատժից ազատելուն: Բանակի շարքերում ծառայելու ցանկությունը՝ բանտում պատիժը կրելու փոխարեն, որը հաճախ է արտահայտվում դատապարտյալների կողմից, չի կարող հարգվել, քանի որ բանակը թափթփուկների տեղ չէ» (Ֆ. 206, ց. 1, գ. 117, թ. 73):

Ըստ վիճակագրական տվյալների 1920 թ. դատարաններում փրեական գործերի փանակը շարունակել է գերազանցել ֆաղափացիական գործերին: Այսպես, Երևանի Օկրուգային դատարանում հունվարի 1-ի դրությամբ կար 368



քրեակա՛ն, և 239 քաղաքացիական գործ, մարտի 1-ի՝ համապատասխանաբար՝ 360 և 117, ապրիլի 1-ի՝ 418 և 322, մայիսի 1-ի՝ 404 և 303, հունիսի 1-ի՝ 407 և 302, հուլիսի 1-ի՝ 423 և 313, օգոստոսի 1-ի՝ 202 և 205, սեպտեմբերի 1-ի՝ 377 և 182, հոկտեմբերի 1-ի՝ 223 և 186 (Ֆ. 201, ց. 1, գ. 118, թթ. 20—49):

Պետական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1920 թ. մայիսի վերջին ընդունվեց Օրենք՝ «Արտակարգ Դատարանի ժամանակավոր օրենքի փոփոխման և լրաչման մասին», որտեղ ասված էր. «1920 թ. մաճիսի 8-ին հաստատված Արտակարգ Դատարանի ժամանակավոր օրենքում մտցնել հետևյալ փոփոխումներն ու լրացումները: Ով որ ազիտացիա մղե Հայաստանի Հանրապետության անկախության դեմ կամ հանդուգն անհարգանք ցույց տա գոյություն ունեցող պետական իշխանությունների վերաբերմամբ կամ պարսավի գոյություն ունեցող կառավարության եղանակը՝ հրապարակավ ձառ ասելով կամ որևէ շարադրություն կարդալով կամ տարածելով, նա կենթարկվի բանտարկությունից մինչև տաժանակիր աշխատանքների՝ 6 տարով: Ով օգտվելով խառնակություններից և անկարգություններից կկատարի ավերում (погром), թալան կամ կմասնակցի այդ գործողությունների մեջ, նա կենթարկվի տաժանակիր աշխատանքների՝ մինչև 6 տարի» (Ֆ. 199, ց. 1, գ. 162, մաս 1, թ. 59):

«Քննչական բոլոր տեղամասերում նկատվում է գործերի մեծաքանակ կուտակում, որն արգելում է գործերի կանոնավոր ընթացքին»,— գրել է Նրևանի Դատաստանական պալատի նախագահը բոլոր Օկրուգային դատարանների նախագահներին և դատախազներին 1920 թ. հոկտեմբերի 22-ին (Ֆ. 206, ց. 1, գ. 141, թ. 54):

Անդրադառնալով հանցավորության խնդրին՝ ներքին գործերի նախարարի օգնականը նախարարների նորհրդին ուղղված իր զեկուցագրում գրել է. «Ներքին գործերի նախարարությունը՝ պետական իշխանության սյունն է երկրում, այն հենարանը, որին կոթնելու են մյուս նախարարությունները: Սակայն այդ հենարանը վերին աստիճանի թույլ է, ուստի և մեր պետական ապարատը ամբողջությամբ թույլ է գործում: Անշուշտ, երկրում կան զուտ օբյեկտիվ պայմաններ, որոնք խանգարում են մեր կազմակերպչական գործին և որոնց դեմ հարկավոր է երկարատև, համառ մրցություն: Սակայն կան խոշորեղտոներ, որոնց ոչնչացումը կախված է կառավարությունից: Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել ու ամենքին հայտնի դարձնել նրանց դերն ու անելիքը: Հանրապետության կազմակերպման հենց առաջին օրերից ներքին կյանքը գտնվում է վերին աստիճանի խառն վիճակում: Հենց այս օրերս էլ հանրապետության ներքին կյանքը նախանձելի չէ, որոշ տեղերում նույնիսկ անտա-

նելի է քաղաքացիների համար: Մարդկանց մի  
ահագին բազմություն սպառազինված լավագույն  
զենքով ցրված է հանրապետության բոլոր անկ-  
յուններում: Չունենալով ոչ մի հաստատուն պա-  
րապմունք և, որ կարևոր է, բացարձակ հափըշ-  
տակություն և կողոպուտի միջոցով հարստանա-  
լը գերազասելով քրտնքոտ վաստակից, նրանք  
իրենց նվիրել են ասպետական արշավներին: Կո-  
ղոպուտը հանցանք չէ: Բարոյական ըմբռնումը  
ոչնչացել է արդեն: Շիրակի նահանգապետը իր  
անզորությունն է հայտնում իր նահանգում ավելի  
քան 6000 զինված անձանց դեմ: Էջմիածնի գավա-  
ռում օրը ցերեկով նուխեցիկները քանի անգամ է  
հարձակվել են գնացքի վրա: Վերջին հարձակման  
ժամանակ սպանվեցին 41 մարդ, վիրավորվեցին՝  
82-ը: Ի՞նչ է Ձանդիբասարը: Ավարարիչ ուժերի  
մի կատաղի մրցում: Ով չի թալանել այնտեղ՝ չլի-  
տեմ: Եվ մինչև այսօր այդ արարքների համար ոչ  
ոք չի պատժվել և նրանց հոգում ամբացել է այն  
համոզումը, թե Հայաստանում կան որոշ մարդիկ,  
որոնք թալանի, կողոպուտի ու սպանության հա-  
մար չեն պատժվում: Վաղարշապատ քաղաքը,  
գտնվելով ահաբեկման տակ, ստիպված է եղել  
քաղաքի վարչության ցանքների ապահովությունը  
դսև մի ամոթաբեր պայմանով: Նուխեցի Արշա-  
կին տրվել է ամսեկան 35 հազար ռուբլի դրամ և  
ամբողջ բերրի 10 տոկոսը: Իսկ Արշակը վարձել է  
4 բանվոր այդ գործի համար, որովհետև ապահո-  
վության գրավականը նրա անունն է, այլ ոչ թև

պահակների թիվը: Երկրի կյանքը վրդովող երկ-  
րորդ հանգամանքը դադտնի ավազակախմբերի  
գոյությունն է: Սրանք կազմված են գլխավորապես  
բնիկ տարրերից, որոնք դարանամուտ են լինում  
գլխավորապես ճանապարհների վրա և զուտ կո-  
ղոպուտի նպատակով սպանում են ճամփորդներին  
և թալանում: Հայաստանի բոլոր մասերում այդ  
երևույթը նկատվում է: Հատուկ ուշադրության ար-  
ժանի է էջմիածնից—Ցարխուն, էջմիածնից—Աշ-  
տարակ—Երևան և Երևանից—Աշտարակ ընկնող  
խճուղիների ուայոնը: Հունվարից մինչև այսօր  
(1920 թ. հուլիս ամիսը:— Ռ. Ա.) այնտեղ եղած  
սպանությունների ու թալանների դեպքերն արդեն  
հարյուրի մոտ են: Մեծ հուզում առաջացրեց Աշ-  
տարակի որբանոցների կառավարիչ Գ. Գյանջեց-  
յանի սպանությունը: Բայց ես պիտի ասեմ, որ  
ներանք մի շաբաթ առաջ մի շարք մարդիկ են  
սպանվել: Սպանվել են խեղճ ու կրակ աբարանցի-  
ներ: Երևանից Աշտարակ սանող խճուղու մոտ Մի-  
կինի ձորը մի սպանդանոց է անցորդների համար:  
Այնտեղ երկու տարվա ընթացքում մոտ 100 մարդ  
է սպանվել: Օրինակները կարանելի է երկարացնել:  
Սակայն այդ ավելորդ է: Դրությունը շատ պարզ է:  
Երկիրը լիքն է քանդող, քայքայող տարրերով» (Ֆ.  
201, յ. 1, դ. 287, թթ. 4—6):

## II. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ՝ ԸՆԳԻՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՐ

1919 թ. մայիսի 6-ին Հայաստանի Ժողովրդական Կուսակցության Ալեքսանդրապոլի Կոմիտեն նրևանի Օկրուգային դատարան է ներկայացրել հետևյալ դիմումը. «Հայաստանի Ժողովրդական Կուսակցության Ալեքսանդրապոլի Կոմիտեն պատիվ ունի նրևանի Օկրուգային դատարանին հայտնել այն զանգվածային շարաշահումների ու բռնությունների մասին, որոնք կատարվել են «Դաշնակցություն» կուսակցության կողմից ընտրության ազատության դեմ, և որոնք տեղ են գտել 1919 թ. մայիսի 4-ին՝ Ալեքսանդրապոլի Քաղաքային Դումայում անցկացվող ընտրությունների ժամանակ:

1. «Դաշնակցություն» կուսակցության անդամները՝ հաճախ նրանք, ովքեր մտնում էին տեղամասային հանձնաժողովների կազմի մեջ, դեռ ընտրություններից շատ առաջ, կիսազրազեղ... քաղաքացիների տներն են տարել հիշյալ կուսակցության ընտրական քվեաթերթիկները՝ փակ ծրարներով:

Վերը հիշատակված երևույթը տեղ է գտել քաղաքի բոլոր շրջաններում: Բայց այդ ուղղությամբ հատկապես աչքի են ընկել Պուշկինի, Բեբուտովի և Վրացական փողոցները, որոնց բոլոր բնակիչները «Դաշնակցություն» կուսակցության անդամներից և ժառանգներից ստացան փակ ծրարներով քվեաթերթիկներ:

2. Չնայած, որ Ընտրական օրենքում և Նախագում խիստ որոշակի ասված է՝ ծրարները և անձնական վկայականը ընտրողը ինքը պետք է ստանա ընտրական տեղամասում այն ժամանակ, երբ կզան դրանք ստանալու, այնուամենայնիվ, «Դաշնակցություն» կուսակցության անդամները և այն կողմնակիցները, որոնք ընտրական հանձնաժողովների կազմում էին, կատարել են անթույլատրելի օրենքի խախտում և, տեղամասերը իրենց մեջ բաժանելով, շատերին հանձնեցին ծրարները և անձնական վկայականները, դրա հետ մեկտեղ վարելով նախընտրական ազդեցության, որը պաշտոնյա անձանց համար բոլորովին անթույլատրելի է:

3. Ընտրողների տները շրջելով՝ հիշյալ պրոնները բռնի կերպով վերցնում էին նրանց ստացված այն կուսակցության քվեաթերթիկները, ում օգտին ընտրողները ցանկանում էին քվեարկել, և նրանց էին հանձնում իրենց քվեաթերթիկները, ջանալով խաբել միամիտ քաղաքացիներին, ներշնչելով այն միտքը, որ այլ կուսակցության թեկնածուները ցուցակներում ներկայացված են ձևի համար, որ չեն անցնի:

4. Քաղաքով մեկ բոլոր ծայրերն են ուղարկվել գեղքով ու մտրակներով ձիավորներ, որոնք բռնությամբ ստիպում էին ընտրողներին, հիմնականում ծեբերին ու հիվանդ կանանց, որպեսզի նրանք քվեարկեն հօգուտ հ. 2 ցուցակի:

5. «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամները՝ մեծից փոքր, այդ թվում նաև Հայաստանի Խորհրդարանի անդամները, որոնք հատուկ ժամանել էին ընտրութիւնների կապակցութեամբ, նաև կազին հակառակ, ընտրական տեղամասերում ու դռների մոտ տանում էին ուժեղ ագիտացիա, խելելով ընտրողների ձեռքերից քվեաթերթիկները և խցկելով «Դաշնակցութիւն» կուսակցութեան քվեաթերթիկները: Հակառակ դեպքում՝ սպառնում էին հաշվեհարդարով: Առանց ամոթի, նույնանման դործողութիւններ նրանք կատարում էին նաև մտավորականութեան թվին պատկանող անձանց նկատմամբ.

6. Նկատի ունենալով, որ ընտրողների արեսներով (ընտրողների խուսափելը ընտրութիւններին մասնակցելուց:— Ռ. Ա.) հասել է վիթխարի շափերի (83 տոկոս), ինչպես նաև այն, որ ցուցակներում նշված շատ ընտրողներ քաղաքից բացակայել են, «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամները նշված անձանց անձնական վկայականները բաժանել են այն փախստականներին, որոնք ժամանակավորապես գտնվում են Ալեքսանդրապոլ քաղաքի տարածքում: Որոշակի վարձատրութեան և «Դաշնակցութիւն» կուսակցութեան կողմից վարձու բռնաջողների հարկադրմամբ, վերջիններս խմբերով գալիս էին քվեարկելու հ. 2 ցուցակի օգտին:

7. Որոշ ընտրական տեղամասերից հափըտակվել էին ընտրական ծրարներ, և դրանց մեջ

դնելով հ. 2 քվեաթերթիկները, պրոլետարական տոնի՝ մայիսի 1-ի օրը, զուտնայի հնչունների տակ, բաժանել էին հավաքված հսկայական ամբոխին:

8. Քաղաքային Կենտրոնական ընտրական հանձնաժողովում առկա է դաշնակների կողմից կատարված անձանց դեմ բռնութիւնների, կեղծիքների մասին վավերացված արձանագրութիւնների մի զանոված» (Ֆ. 201, ց. 1, գ. 45, մաս II, թթ. 513—515):

Բնութագրելով այս երևույթները որպէս «նախընտրական կամպանիայի այլանդակ ու վրդովեցուցիչ դրսևորում»՝ Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Կոմիտեն խնդրել էր Օկրուգային դատարանին քննել ընտրութիւնների հետ կապված գործը և նշված ընտրութիւնները բեկանել՝ ընդունելով դրանց «աղաղակող անարդարութիւնը և բացահայտ անօրինականութիւնը» (նույն տեղում, թ. 515):

Իրենց քաղաքական իրավունքները ոտնահարելու կապակցութեամբ Երևանի Օկրուգային դատարան են դիմել նաև Ալեքսանդրապոլ քաղաքի ընտրողները: Դիմումի մեջ ասված էր. «Քաղաքային Դումաների վարույթի մասին ժամանակավոր կանոններին հակառակ, ընտրական հանձնաժողովների նախագահները հսկողութիւն չէին իրականացնում, որպեսզի ընտրողների ազատութեան վրա չլինեն ճշումներ և շտարվի նախընտրական ագիտացիա: Հ. 1 ընտրական տեղամաս

սում, ուր հանձնաժողովը տեղավորված էր «Խրիմյան» ուսումնարանի պատշգամբում, ընտրող կոնս Գյուլակյանը, իր շուրջը հավաքելով Ալեքսանդրապոլի գյուղացիներին, բռնի կերպով նրանց խցկում էր Դաշնակցական կուսակցության ընտրական հ. 2 թերթիկները, անցնելով նույնիսկ սպառնալիքների: Կողմնակի հանդիսատեսներից և ագիտատորներից հանձնաժողովի սեղանը չէր մեկուսացված: Կարգ ու կանոնի հաստատումը այնքան էր դժվարացել, որ տեղամասի նախագահը ստիպված դիմել է քաղաքապետին, որին մեծ դժվարությամբ հաջողվեց վերականգնել կարգ ու կանոնը: Հ. 7 տեղամասում ագիտատորները ընտրական թերթիկները փոխում էին հ. 2-ով: Հ. 8 տեղամասում բազմաթիվ ընտրողներ, շիմանալով օրենքը, միաժամանակ մի քանի թերթիկ էին գցում քվեատուփի մեջ: Ընտրողների ցուցակում մտցված էին անշափահասներ: Օրենքի այս աղաղակող խախտումներից բացի, «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչը անօրինական գործողություններ է թույլ տվել նաև մինչև ընտրություններ՝ ազդելով ընտրությունների արդյունքների վրա: Շրջելով փողոցները և բնակարանները, դաշնակցականները ընտրողների մոտ զտնվող թերթիկները փոխարինում էին հ. 2-ով: Ընտրողների մեծ մասի անգրագիտությունից օգտվելով՝ դաշնակցական ագիտատորները նրանց հարց ու փորձ

էին անում, թե ում օգտին են քվեարկելու: Եվ անկախ ընտրողի ասածից, նրան հանձնում էին հ. 2 թերթիկը, ասելով, որ սա հենց այն համարն է, որ ինքը ցանկացել է: Առհասարակ «Դաշնակցություն» կուսակցությունը նախընտրական ագիտացիայի ժամանակ ոչ մի միջոցներից չէր խորշում: Այսպես. «Դաշնակցություն» անգամ Ավագ Հարությունյանը հաց էր բաժանում քաղաքացիներին, ընտրողներին՝ ասելով, որ նրանք, ովքեր որ հ. 2 թերթիկի օգտին ձայն չեն տա, այլևս՝ հաց չեն ստանա: Հացը բաժանողների կողմից այսպիսի հայտարարություններ արվել են քաղաքի այլ շրջաններում: Դաշնակցական ագիտատորները՝ հ. 3 ցուցակի օգտին ձայներ հավաքելու համար, հավաստիացնում էին, որ թուրքերի կողմից պատճառած վնասի հատուղումը կստանան միայն նրանք, ովքեր իրենց ձայնը կտան հ. 2 ցուցակի օգտին: Դաշնակցական ագիտատորները սպառնում էին ահաբեկչությամբ: Այդ մասին է վեհալում Ա. Ռ. Թոփչիյանցի լսանութում կատարված դեպքը: Վերոյրջալի հիման վրա՝ Օկրուգային դատարանին խնդրում ենք քննության առնել մեր բողոքը, վերացնել մայիսի 4-ի Ալեքսանդրապոլի Քաղաքային Դումայի ընտրությունները և նշանակել նոր ընտրություններ» (Ֆ. 201, ց. 1, գ. 45, մաս II, թթ. 510—512):

Իսկ «Մյուս օրը քաղաքացի Մոսո Արոնի սպասուհին բարձրաձայն իր վրդովմունքն էր հայտնում, ասելով, թե ճշգրտի միջոցով խոս-

տացել էին, որ նրանց, ովքեր կքվեարկեն հ. Չ-ի օգտին, կտան մեկ ֆունտ հաց, բայց այսօր նորից կես ֆունտ տվեցին» (Նույն տեղում):

Հայաստանի ժողովրդական Կուսակցության Ալեքսանդրապոլի Կոմիտեն, Անկախ սոցիալիստների Ալեքսանդրապոլի Կոմիտեն, Ալեքսանդրապոլի շրջանային Գյուղացիական Միության Վարչությունը, Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական Կոմիտեն, Հ. Ռ. Կուսակցության Ալեքսանդրապոլի Ակումբը 1919 թ. դեկտեմբերի 10-ին բողոք են ներկայացրել՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ»: Բողոքում ասվել է. «Մենք, ներքո ստորագրյալներս, կսկիծով նկատում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը, փոխանակ հետզհետե ամրանալու, ընդհակառակը՝ դիմում է լեպի կործանում: Մեր խորին համոզմունքով, այս սոսկալի գահավիժումի պատճառը ներկա կառավարությունն է, որը բռնի ու կեղծ միջոցներով աշխատել է միմիայն ամրացնել դաշակցական հեգեմոնիան, ոտնահարելով ժողովրդի ձյտումները և դուրս վտարելով ձեռնահաս ու կարող հոսանքների ուժերը՝ մեր ներքին վերածնության գործում:

Համոզված լինելով, որ հարկավոր էր մի պատվանդան, որուն վրա դաշակցական կառավարությունը կարողանար կանգնել, այդ կառավարությունը դիմում է ընտրական ամեն տեսակ ապօրինությունների, որպեսզի հնարավոր լինեն ներկայացնել ինքզինքը իր հայ ժողովրդի

հավատարմատար և որպեսզի միջոց ունենար պահպանելու իր դիրքը իբր ազգային բյուրոկրատիա: Վարչական կազմը լցված է միմիայն դաշակցականներով, նշանակված դաշակցական նախարարություններից, որոնք գործում են կամայականորեն, անհամապատասխան իրեն կոչմանը, և վարում են հին ռեժիմի գործելակերպ: Դատարանը ազատ չէ: Դատավորները եղած են նշանակովի և գտնվում են կուսակցական ճնշման տակ, որով բողոքն ու արդարությունը կխեղդվեն ու ճշմարտությունը չի կարող երևան գալ: Ֆինանսական դրությունը հայտնված է կուսակցամոլների ձեռքը և ֆինանսական պաշտոնյաները վատնում են ժողովրդի կոպեկները անհաշիվ ու անկոնտրոլ: Հայաստանի հորհրդարանի դաշակցական ֆրակցիան չքաշվեց նեղ, կուսակցական նկատառումով զրկել հորհրդարանի օպոզիցիային իրավունքից՝ ընտրելու Պետական Վերահսկիչի պաշտոնի համար օպոզիցիայի վստահությունը վաելող անձին: Եվ սակայն, շնայած վատնված ահագին գումարներին, ժողովրդի պարենավորման սործը և երկրի հաղորդակցության ճանապարհները շարունակում են մնալ ողբալի վիճակի մեջ: Պաշտոնյաների դրամական վատնումները կմնան անպատիժ լոկ կուսակցական նկատառումներով: Դաշակցական կառավարությունը մինչև անգամ պղծում է տաճկահայության Սուրբ Դատը: Չնայելով, որ տաճկահայությունը տարիներով և դարերով իր մասին վրա կրած

է այդ Դատի պատճառած հետեանքները, մեր կառավարութիւնը փորձում է բռնութեան ենթարկել տաճկահայութեան իրավունքները, արհամարելով ընտրութիւններին մասնակից անել հոծ զանգվածը ներսի և դրսի արևմտահայութեան: Շեշտէ: է պետք, թե դաշնակցական կառավարութիւնը այնքան առաջ է գնում իր կուսակցամուլ քաղաքականութեան մեջ, որ մինչև անգամ պառլամենտական ընտրութիւնների ատեն ընդունած է միմիայն դաշնակցական տաճկահայերի թեկնածուները, այն էլ շատ սահմանափակ թվով: Զի կարելի չեղտել, որ այս կառավարութիւնը մինչև անգամ ձգտում է խանգարել Փարիզի մեջ գործող տաճկահայութեան ներկայացուցչութեանը, կազմակերպելով անոր շուրջ այնպիսի ինտրիգներ, որոնք մեկ կողմէն կնսեմացնեն Հայկական Դատի արժեքը հողթող պետութիւնների աչքին, և մյուս կողմէն՝ կվարկաբեկեն առհասարակ հայութեան անունը աշխարհի առաջ» (Փ. 201, ց. 1, գ. 278, թ. 62):

**III. ԱՆՁԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ:  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վերլուծելով հանցավորութեան պատճառները, Երևանի Օկրուգային դատարանի Դատախազը 1918 թ. սեպտեմբերի 6-ին գրել է. «Միլիցիայի կոմիսարներն ու իրենց օգնականները

հաճախ մասերից բացակայում են, որի հետեւանքով քաղաքացիները ղրկված են հանցագործութիւնների մասին ժամանակին հայտարարութիւններ անելուց: Երևանի Քաղաքային միլիցիայի պետը և մասերի կոմիսարները շատ անփութ են օգտագործում իրենց պարտականութիւնները և այսպես կոչված հայտնի գործերով (Երևան քաղաքի բուլվարում կատարված սպանութիւնը. Երևանի գիմնազիայի շենքում կատարված տղայի սպանութիւնը. Կոշկինայի բնակարանից դրամի գողութիւնը և Իսմաիլովի կողոպուտը): Մինչդեռ վերջին ժամանակներում... ծանր ընդհանուր քրեական ոտնձգութիւնների քանակի ավելացումը, որոնք ուղղված են քաղաքացիների անձնական ազատութեան, կյանքի ու գույքի դեմ, անհապաղ պահանջում են երկրի օրինական իշխանութեան բոլոր կրողներից ձեռնարեկել ամենավճռական միջոցառումները՝ հանցավորութեան դեմ մղվող պայքարում» (Փ. 201, ց. 1, գ. 38 (1), թ. 14):

Արդարադատութեան նախարարը նույնպես նշել է. «Անթիվ և դրական տվյալներով ու փաստերով կարելի է ապացուցել, որ մենք գավառներում ու Հայաստանի մայրաքաղաք Երևանում չունենք լավ վարչակազմ ու միլիցիա, չկա կյանքի և սույքի անվտանգութիւն, իշխում է անարխիան՝ իր բոլոր տեսակներով, որից որ շատ է տառապում ժողովուրդը և քայքայվում տնտեսութիւնը» (Փ. 199, ց. 1, գ. 33, թ. 50):

Դրա հետևանքով մեծապես տուժել է ֆրեական գործերով արդարադատության իրականացումը: «Ինձ վստահված Մինիստրության հաստատություններ և պաշտոնատար անձինք՝ Օկրուգային դատարան, Հաշտարար դատավորներ, Քննիչներ և Դատախազական հսկողությունը իրականացնող անձինք, բավականին հաճախ են դիմում բողոքներով այն մասին, որ իրենց գործունեությունը խափանվում է վարչակազմի ու միլիցիայի պաշտոնյաների կողմից, որոնք միանգամայն անտարբեր են տրված հանձնարարությունների նկատմամբ... որի հետևանքով հանցագործության հետքերը պահպանելու, մեղադրյալներին ձերբակալման համար անհետաձգելի գործողություններ պահանջող սկսված քննչական գործերը առաջ չեն ընթանում, իսկ ունկնդրության նշանակված գործերը հետաձգում են,— 1919 թ. մարտի 11-ին գրել է Արդարադատության նախարարը նախարարների խորհրդին:— Գործերի այսպիսի իրավիճակը զցում է արդարադատության պատիվն ու հեղինակությունը, ապաբարոյականացնում հասարակության արատավոր տարրերին, ներշնչելով անպատժելիություն՝ կատարված արարքի համար, և դատական իշխանությունների թուլություն: Վարչակազմի ու միլիցիայի կողմից օրինական աջակցության բացակայության հետեվանքով իրենց օրինաչափ գործունեության ընթացքում պակաս չեն տուժում և այլ գերատեսչություններ: Ընդհանուր պետական մեխանիզմում

վարչակազմը և միլիցիան այնպիսի էական դեր են կատարում, որ առանց գործունյա, հմուտ ու իր պարտքը գիտակցող վարչակազմի ու միլիցիայի պետական ապարատը զրկվում է արդյունավետ գործունեությունից և ճիշտ գործելուց՝ առհասարակ պետական իշխանությունը վարկաբեկելով բնակչության աչքում» (Նույն տեղում, թ. 49):

Նույն օրերին հանցավորության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով Ներքին գործերի նախարարը հետևյալ հանձնարարությունն էր տվել Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու միլիցիայի կոմիսարին. «Երկրում զարգացող անարխիայի, թալանի, ավազակության և այլ աննորմալ երևույթների կանխման նպատակով լիազորում են Ձեզ... անձանց, որոնք մերկացվել են այս կամ այն հանցագործություններ կատարելու մեջ, ենթարկել վարչական (արտադատական) բանտարկություն՝ երեք ամսից ոչ ավելի ժամանակով, Ձեր հայեցողությամբ» (Ֆ. 201, ց. 1, գ. 576, մաս I, թ. 39):

Թե որքանով էր այսպիսի արտադատական բանտարկությունը նպաստում հանցավորության դեմ մղվող պայքարին, կարելի է փաստել հետևյալ օրինակներով:

Երևանի դավառային կոմիտար Ամիրխանովը Զատկրան գյուղի բնակիչ Ծնոք Շահբազովին ենթարկել էր մեկ ամսվա բանտարկության, քանի որ նա «սխտեմատիկաբար զբաղվում է Կողու-



թյամբ և ահաբեկում էր բնակչությանը, որը վախենում է հայտարարություն տալ նրա հանցագործության մասին» (Նույն տեղում, թ. 55): Ալեքսանդրապոլի գավառային կոմիսար Լորեցյանը 1919 թ. նոյեմբերի 6-ին որոշել է. «Քաղաքի հսկողությամբ պարզելով, որ Մեծ Սարիար գյուղի բնակիչ Սեդրակ Հովսեփյանը մերկացվում է գողություններ, շորթումներ և այլ հանցագործություններ կատարելու մեջ, հանցագործությունների կանխման նպատակով՝ բանտարկել մեկ ամսով Ալեքսանդրապոլի բանտում» (Ֆ. 201, ց. 1, գ. 580, մաս I, թ. 181):

Մյուս կողմից, նույն գավառի կառավարիչ Թալանյանցը իր որոշմամբ Բաշ-Շորագալ գյուղի բնակիչ Սարգսր Սականովին և Տաշկալա գյուղի բնակիչ Լիպարիտ Հարությունյանին 30 օրվա բանտարկություն է սահմանել՝ «հասարակական անդորրը խախտելու համար» (Ֆ. 201, ց. 1, գ. 576, մաս I, թ. 10): Իսկ ապօրինի զենք կրելու համար Հայկ Փոքրիկյանը ենթարկվել էր... տուգանքի 5 ո. շափով (Նույն տեղում, թ. 60): Քաղաքացիները վարչական կարգով ենթարկվել են բանտարկության նաև սակագների բարձր հաց, միս վաճառելու, նամակով դրամ շորթելու համար և այլն (Նույն տեղում, թթ. 25, 27, 56): Պրակտիկայում փրեական հանցագործության և վարչական զանցանքի միջև տարբերություն չտեսներ հազիվ թե նպաստե հանցագործությունների նվազեցմանը: Մանավանդ,

որ գողության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով հաստատված Հաշտարաբ ընդդատությունը ընդլայնելու մասին ժամանակավոր օրենք խստացրեց գողության համար փրեական պատասխանատվությունը (Ֆ. 199, ց. 1, գ. 33, թ. 64):

Անձի և սեփականության դեմ ուղղված չքացահայտված հանցագործությունների թիվը մեծ տոկոս էր կազմել: Օրինակ՝ միայն Նրևանի գավառի տարածքում 1919 թ. փետրվարի 16-ից մինչև մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարված 133 հանցագործություններից բացահայտվել էր 23-ը, կամ 15,1 տոկոսը (Ֆ. 201, ց. 1, գ. 293, մաս I, թ. 207): ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը՝ համապատասխանաբար 78-ից՝ 49-ը, կամ 62 տոկոսը (Նույն տեղում): մայիսի 1-ից մինչև մայիսի 31-ը՝ 83-ից՝ 23-ը, կամ 27,7 տոկոսը (Նույն տեղում, թ. 486): հունիսի 1-ից մինչև հուլիսի 31-ը՝ 63-ից՝ 22-ը, կամ 34,9 տոկոսը (Ֆ. 201, ց. 1, գ. 293, մաս III, թթ. 667 — 669): օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 9-ը՝ 233-ից՝ 5-ը, կամ 2,14 տոկոսը (Նույն տեղում, թ. 803) և այլն:

Հատկապես անում էր դիտավորյալ տպառությունների թիվը: Այսպես. Օրևանի Քաղաքային միլիցիայի տվյալներով, 1919 թ. մարտի 22-ից մինչև 29-ը ընկած ժամանակահատվածում կատարվել է 9 սպանություն (Ֆ. 199, ց. 1, գ. 231, թ. 129): Իսկ 1919 թ. մայիսի 18-ից մինչև հու-

նիսի 20-ը ընկած ժամանակահատվածը Երևանի Առաջին քննչական տեղամասում (մայրաքաղաքը բաժանված էր 5 քննչական տեղամասերի) նախաքննություն կատարած 40 քրեական գործերից 42,5 տոկոսը եղել են դիտավորյալ սպանությունների, 15 տոկոսը՝ ավազակությունների ու կողոպուտի վերաբերյալ (Ֆ. 201, ց. 1, գ. 300, թ. 69): 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Դիլիջանի գավառում կատարվել էր 66 սպանություն և 4 սպանության փորձ (Ֆ. 201, ց. 1, գ. 311, թ. 47):

Ինչպես վկայում են արխիվային տվյալները, մեծ տոկոս է կազմել նաև սպանությունների համար դատապարտված անձանց թիվը: 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին միայն Երևանի Օկրուգային դատարանի կողմից դատապարտված անձանց 38,2 տոկոսը մեղավոր էր ճանաչվել կյանքի դեմ ուղղված հանցագործություններ կատարելու մեջ (Ֆ. 201, ց. 1, գ. 107, թ. 189):

Հանցավորության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով դեռ 1919 թ. հուլիսի 21-ին ընդունվել էր Օրենք, որի «գ» կետի համաձայն «բոլոր անձինք՝ ինչպես քաղաքացիական, նույնպես և զինվորական գերատեսչության, դիտավորյալ սպանությունների, բռնաբարության, ավազակության ու կողոպուտի համար ընդդատյա են Հանրապետության Զինվորական Դատարանին» (Ֆ. 210, ց. 1, գ. 1, թ. 125):

1919 թ. հոկտեմբերի 29-ին ՆԳՆ Վարչակազմի ու միլիցիայի բաժնի պետը հետևյալ շրջաբերական նամակն է հղել բոլոր գավառների կոմիսարներին. «...Դեպքերի մասին բոլոր գավառային կոմիսարների զեկուլցյաներից երևում է, որ կողոպուտներն ու ավազակությունները գավառներում կրում են համաճարակային բնույթ: Դրա համար առաջարկում եմ կիրառել ամենավճռական միջոցները՝ գավառներում իրական հանգրստության և օրինական կարգ ու կանոնի հաստատման, ինչպես նաև ձեռնարկել բոլոր միջոցները՝ ավազակության և կողոպուտի մեջ մեղավոր անձանց ձերբակալման համար» (Ֆ. 201, ց. 1, գ. 299, թ. 30):

Նույն օրերին Քարվանսարայի զեմստվոյի վարչության նախագահը Ներքին գործերի նախարարին տեղեկացրել է. «Ամեն օր գյուղացիները մեզ են դիմում բողոքներով՝ հասարակական անվտանգության նկատմամբ հսկողության բացարձակ բացակայության կապակցությամբ, բացահայտ կողոպուտների առիթով, որոնք կատարվում են այն խումբ անձանց միջոցով, որոնց ազգանունները գյուղացիներին լավ հայտնի են: Սակայն գանդատներ ներկայացնողները բոլոր դեպքերում հրաժարվում են զրավոր ցուցմունքներ տալ, խընդրում շհրապարակել իրենց անուններն ու ազգանունները քննչական իշխանություններին և նախօրոք հայտարարում, որ պաշտոնական հարցազնություն դեպքում իրենք կհրաժարվեն ասվածը

հաստատելուց: Թալանը գավառում կրում է զանգ-վածային բնույթ, գյուղացիների ընկճվածությունը հասել է աներևակայելի չափերի: Կան անձինք, որոնք ունենին հինգ-վեց գլուխ եզ, իսկ հիմա շու-նեն ոչինչ: Թալանը մեր գավառում ընթանում է միանգամայն կազմակերպված: Այդ գործով զբաղ-վում են մի քանի կազմակերպված մեծ խմբեր, որոնք թշնամուկներ են անում մեկը մյուսի դեմ և որոնցից յուրաքանչյուրը սարսափի մեջ է պահում գավառի բնակչությանը: Վստահություն չկա և իշ-խանությունների նկատմամբ: Իշխանությունները չեն պաշտպանում աշխատավոր գյուղացիության շահերը: Նրանք հովանավորում են թալանչիներին: Եվ սպանվելու սարսափը մարդկանց ստիպում է լռել: Գյուղացիները մեզ հարց են տալիս. ի՞նչ է մտածում այս կապակցությամբ կառավարույթու-նը: Մտադի՞ր է, արդյոք, նա բացահայտ կերպով կանգնել աշխատավոր գյուղացու կողմը: Ասում են, հին ռեժիմի օրոք երեք դաշնակցական ահ ու սարսափի մեջ էին պահում և՛ գյուղական վարչա-կաղմը, և՛ հասարակության վնասակար տարրե-րին: Այժմ ողջ իշխանությունը ժողովրդի կողմից հանձնված է իրենց ձեռքը: Եվ մի՞թե նրա հա-մար, որպեսզի նրանք հովանավորեն ավազակու-թյունները: Այդ կարծիքը իր հիմքում իրական հող ունի: Եվ յուրաքանչյուր ազնիվ հասարակա-կան աշխատող ամոթ է զգում, որ չկան փաս-տարկներ, որոնցով կարել էր դա հերքել: Մենք ցանկություն չունենք չափազանցնել այս երևույ-

թի նշանակությունը, որը նկարագրել ենք: Չա-փազանց սառնորեն դիտելով իրերի վիճակին, մենք պետք է ընդունենք, որ դրուժյունը բա-ցարձակորեն ծանր է» (Ֆ. 201, ց. 1, գ. 299, թթ. 326—327):

Անձի կյանքի դեմ ուղղված հանցագործու-թյունների դեպքերը և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը որոշ գավառներում գրեթե հավասարվել էին: Օրինակ՝ Ղարաբլիխս գավառում 1919 թ. հունվարի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը ընկած ժամանա-կահատվածում կատարվել էր սպանության 58, իսկ գողության՝ 60 դեպք (Ֆ. 201, ց. 1, գ. 300, թթ. 37—41): Երևանի Դատաստանական պալա-տի կողմից 1919 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիս-ներին ապելյացիոն կարգով քննության առնված 63 քրեական գործերից 32-ը վերաբերվել են դի-տավորյալ սպանություններին (50,8 տոկոս) և 17-ը՝ գողություններին (27 տոկոս): Դիլիջանի գավառում 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսնե-րին կատարվել էր անձի կյանքի և առողջության դեմ ուղղված 91 հանցագործության դեպք և գո-ղության՝ 32 դեպք (Ֆ. 210, ց. 1, գ. 45, թ. 13: Ֆ. 201, ց. 1, գ. 311, թ. 47):

1920 թվականին անձի դեմ ուղղված հանցա-գործությունները և սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմեցին հսկայական Բանակ: Այն հայտնի է դառնում Երևանի Դատաս-տանական պալատի Դատախազ Մելիք-Աղամիր-

յանի կողմից գրված հետևյալ բացատրագրից, որը ներկայացվել է Արդարադատության նախարարության 1920 թ. հունիսի 29-ին. «Ներկայումս նշված Օրենքը (խոսքը Զինվորական Դատարանի ընդդատության ընդլայնման մասին է՝ ի հաշիվ դիտավորյալ սպանությունների և այլ ծանր հանցագործությունների:— Ռ. Ա.) լրիվ ծավալով կիրառելը նպատակահարմար չէ հետևյալ հիմքերից ելնելով. վերը հիշատակված հանցագործությունների վերաբերյալ գործերի հանձնումը Զինվորական Դատարանին հանդիսանում է պրակտիկորեն անիրականանալի՝ վերջինիս շահարկվածության պատճառով, իր ներկա կազմով, քննելու այսպիսի վիթխարի քանակությամբ գործեր» (Փ. 210, ց. 1, գ. 1, թ. 125):

Մյուս կողմից, ինչպես երևում է Արդարադատության նախարարի կողմից Բժշկական առողջապահության նախարարությանը հասցեագրված գրությունից, «կալանավորական գործերի մեծ մասի նախնական քննությունը չի վերջանում այն պատճառով, որ դիակի հերժում չի կատարվում, և բժիշկները մերժում են դատական քննիչների պահանջով զնալ հերժման: Գործի շահի համար խնդրում եմ կարգադրել, որ գավառական բժիշկները շիտաափեն իրենց ստանձնած պարտականություններից՝ դիակների հերժման և վիրավորների ստուգման կապակցությամբ (Փ. 203, ց. 1, գ. 141, թ. 32):

Սպանություններ, ավազակություն, թալան կատարվում էր նաև զանվոտակառուցների նկատմամբ՝ փաստ, որը խոսում է հանցավորության մասշտաբների մասին:

Դեռ 1920 թ. փետրվարի 23-ին Զինվորական նախարար Արարատովը հետևյալն է գրել Ներքին գործերի և Արդարադատության նախարարներին. «Ներկայումս մեր Հանրապետության հանցավոր տարրի հանդգնությունը հասել է այնտեղ, որ, բացի այն անձանցից, ովքեր շունեն հնարավորություն նրան որևէ դիմադրություն ցույց տալու, նշված տարրի հարձակման սկսել են ենթարկվել և զինվորականները: Այսպես. օրը ցերեկով, դեպի կայարան տանող ճանապարհին, ծանր վիրավորվել էր գեներալ-մայոր Զումարովը, որը ստացված վերքից այնուհետև մահացավ: Էջմիածնի ճանապարհին կատարվել էր հարձակում 6-րդ Լեռնային մարտկոցի գումակի վրա, որի հետևանքով սպանված են երեք և վիրավորված երեք զինվորներ: Վերջապես, այս օրերին կատարվեց ևս մի զայրացուցիչ հանցագործություն: Քաղաքից ոչ հեռու, Քանաքեռի խճուղում, ավազակային հարձակման հետևանքով ատրճանակի կրակոցով սպանվել էր փոխգնդապետ Կուզրիկովսկին: Զույսած արտաքին ու քրեական միլիցիայի, շնայած մի շարք անձանց գոյությունը, որոնց պարտականությունների մեջ է մտնում հանցագործություններ կատարած անձանց հայտնաբերումը և դրանց դեմ անողոք պայքարը՝ վերջիններս այս-

պես էլ շեն հայտնաբերվում ու շեն պատժվում: Եվ էլ ավելի լիտիութեամբ շարունակում են կատարել իրենց սև գործը, ոհարակցության ենթարկելով բնակչությանը և խանգարելով քաղաքացիների կյանքի խաղաղ ընթացքը: Վերջին ժամանակներս նկատվում է զինվորականների կողմից՝ ինչպես սպանների, նույնպես և զինվորների, զայրույթը իր ընկերոջ նկատմամբ կատարված հանցագործության կապակցությամբ և առանձնակի զայրույթը՝ դրանք կատարած անձանց չհայտնաբերելու փաստով: Որպես Հայաստանի Զինվորական գերատեսչության ղեկավար՝ իմ բարոյական ու ծառայողական պարտքն եմ համարում հայտարարելու, որ զինվորականների նկատմամբ արդեն իսկ հանցագործություններ կատարած անձանց չհայտնաբերելը և, հետևաբար, նրանց անպատիժ թողնելը, ինչպես և հետագայում նույնանման հանցագործությունների կատարումը, կարող է հանգեցնել մեր իրավիճակի համար անցանկալի հետևանքների՝ զինվորական մասերի զայրույթի և անձնական հաշվեհարդարի՝ այն անձանց նկատմամբ, որոնք, իրենց կարծիքով, կասկածվում են կատարված հանցագործությունների մեջ» (Փ. 201, ց. 1, գ. 26, թ. 81):

#### IV. ՊԱՇՏՈՆՆԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1919 թվականի հուլիսի 7-ին ընդունվեց Օրենք՝ «Հայաստանի Հանրապետության Արտակարգ

Քննչական Հանձնաժողովի և Արտակարգ Դատարանի մասին»:

Օրենքում ասված էր. «Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության և լուծման համար ժամանակավորապես հաստատվում է Արտակարգ Քննչական Հանձնաժողովը և Արտակարգ Դատարանը: Արտակարգ Դատարանին և Արտակարգ Քննչական Հանձնաժողովին ընդդատյա են պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործերը.

ա) քաղաքացիական գերատեսչության անձանց՝ այն արարքների համար, որոնք վերաբերյալ նախատեսված են պատիժներ՝ զուգորդված բոլոր իրավունքներից զրկելու հետ, բոլոր հատուկ իրավունքների հետ.

բ) զինվորական գերատեսչության անձանց.

գ) բոլոր այն գործերը, որոնք Արդարադատության նախարարի օրդերով կներկայացվեն Քննչական Հանձնաժողովին և Արտակարգ Դատարանին» (Փ. 206, ց. 1, գ. 39, թ. 11):

Արտակարգ Քննչական Հանձնաժողովը բաղկացած էր երեք անձից՝ նախագահ (Երևանի Օկրուգային դատարանի Դատախազ և անդամներ (Երևանի Օկրուգային դատարանի անդամ և Օկրուգային Բաղարանի Դատախազի օգնական, որին նշանակում էր Արդարադատության նախարարը):

Արտակարգ Դատարանը նույնպես բաղկացած էր երեք անձից՝ նախագահ (Սենատի անդամներ

րից մեկը՝ Արդարադատութեան նախարարի նշանակմամբ) և երկու անդամներ (Դատաստանական պալատի նախագահ և Օկրուգային դատարանի նախագահ):

Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ բոլոր գործերը Դատական քննիչների վարույթից վերցվել և հանձնվել էր Արտակարգ Քննչական Հանձնաժողովի վարույթին (Նույն տեղում):

Ինչպես երևում է Դատաստանական պալատի Դատախազի կողմից 1919 թ. հուլիսի 11-ի դրույթունից, որն ուղարկվել էր Արդարադատութեան նախարարին, Արտակարգ Դատարանի մասին 1919 թ. հուլիսի 7-ի Օրենքը կիրառելիս՝ «...այդ Օրենքը նկատի ունենալով արարագացնել պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը...» (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 82):

Սկզբից ևեթ Հանձնաժողովը ստացավ ամենափչը 200—300 գործ (Նույն տեղում):

Պաշտոնեական հանցագործությունների տարածվածության մասին է վկայում Հայաստանի Բանտային տեսուչի գրությունը Ներքին գործերի նախարարության գրասենյակ 1919 թ. մայիսի 2-ին. «Պատիվ ունեմ հաղորդելու, որ Ղարաքիլիսայի բանտը քրեական հանցագործներով լեփ լեցուն լինելու պատճառով ծայրահեղ ցանկալի է ձերբակալված... գյուղական պաշտոնեական անձանց և միլիցիոներներին պատիժը

կրելու համար շուղարկել Ղարաքիլիսայի բանտը...: Պաշտոնատար անձանց պահելը... բանտում համարում են անհարմար և նույնիսկ վտանգավոր: Քանի որ վրեժի հողի վրա քրեական հանցագործների կողմից այդ անձինք վտանգվում են կյանքով...: Վերը շարադրվածի հիման վրա՝ խնդրում եմ Ղարաքիլիսային դավառային կոմիսարին, զավառային միլիցիայի պաշտոնատար անձանց բանտ շուղարկել...:» (Ֆ. 201, ց. 1, գ. 576, մաս I, թ. 200):

Դեռ 1919 թ. հունվարին միայն վարչակազմի և միլիցիայի պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցվել էր 23, իսկ փետրվարին՝ 29 քրեական դործ: Կալանավորվել էին Երևանի Քաղաքային միլիցիայի և Քրեական միլիցիայի պետերը: Կատարված հանցագործությունների շարքում՝ կողոպուտներ, բռնաբարություն, պաշտոնեական դիրքի շարաշահումներ, ծեծ և խոշտանգում, ապօրինի ռեկվիզիցիա (բռնագրավում) և այլն (Ֆ. 201, ց. 1, գ. 300, թ. 18): Իսկ 1919 թ. մարտի 6-ին Հայաստանի Զինվորական նախարարը հետևյալն է գրել Ներքին գործերի նախարարին. «Պետք է անմիջապես հեռացնել նոր Բայազետի ողջ վարչակազմին, որի համատարած հանցավորությունը երևում է Արտակարգ Հանձնաժողովի կողմից կատարված քննությունից» (Ֆ. 201, ց. 1, գ. 277, թ. 14):

1919 թ. հունիսի 25-ին Աշտարակի ու Երևանի միջև ընկած տարածքում շորս զինված միլիցիոներներ թալանել էին Մուլից փախստական

Տիգրան Շարոյանին՝ խլելով նրանից 15 ֆունտ յուղ, 500 ու դրամ և բրդյա գոտի, ծեծել և ապա բաց թողել (Ֆ. 201, ց. 1, գ. 298, մաս III, թ. 603): Նույն օրերին Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու միլիցիայի կոմիսարը միլիտարիստիկ տեսուչ Շահինյանին գրել էր այն մասին, որ Գազախի դավառի Պիզիս գյուղի բնակիչները «ընդորոժում են տեղամասային կոմիսար Քալանթարյանի անօրինական գործողությունների դեմ, որն առանց քննության ու դատի պահանջում է տարբեր անձանցից հափշտակված դրամը. մտորակի ուժով մեկից վերցնում է տասնյակ հազարներ ու փոխանցում ուրիշներին. իր իշխանությունները հալանավորում է մարդկանց, ծեծելով նրանց, ինչպես անասունների: Մեծի ազդեցության տակ որոշ քնտանիքներ ղրկվել են բանվորական ձեռքերից և թաքնվել մուսուլմանական գյուղերում» (Ֆ. 201, ց. 1, գ. 277, թ. 54): Քարվասարի զեմստվոյի վարչության միջնորդարից հայտնի է դառնում «Դիլիջանի գավառի վարչակազմի հակաօրինական գործողությունների մասին», իսկ էջմիածնի գավառի կոմիսար Արդուտյանը «բնակիչներից խլում է անասունը և վաճառում իր միլիտարիստներին», «կոմիսար Մելիքեանցիզյանը խլում է ցորենը» (Նույն տեղում, թ. 63): Ներքին գործերի նախարար Գյուլիանդարյանը, հաշվի առնելով Կիրաշլի ու Կալաշ գյուղերի բնակիչների ցուցմունքները այն մասին, որ Քարաջորանի հասարակական կոմիսար Մկրտիչ Մուշեղ-

յանը մասնակից է եղել նշված գյուղերի գույքի թալանին, և «գտնելով, որ պաշտոնատար անձի գործունեությունը ոչ միայն հանցավոր է, այլ խարխում է պետական իշխանության հեղինակությունը», նրան կալանավորել էր և «քրեական հետապնդում հարուցել նրա դեմ» (Ֆ. 201, ց. 1, գ. 287, մաս I, թ. 280): Նախարարի մի այլ որոշմամբ, «հաշվի առնելով, որ... Եղվարդի հասարակական կոմիսար Թադևոս Ներսեսյանը մասնակցել է Կաղամլու և Կալաշ գյուղերի թալանին և պաշտոնատար անձի կողմից այսպիսի գործունեությունը գտնելով ոչ միայն հանցավոր, այլև պետական իշխանության հեղինակությունը քայքայող», վերջինիս բանտարկել էր էջմիածնի բանտում՝ «քրեական հետապնդում հարուցելով նրա դեմ» (Ֆ. 201, ց. 1, գ. 580, թ. 149):

1919 թ. նոյեմբերի 14-ին Երևանի Արտակարգ Դատարանը դատավճիռ արձակեց Ալեքսանդրապոլ Քաղաքի միլիցիայի պետ Տեր-Սահակովի, Առաջին տեղամասի կոմիսար Ամիրխանովի, նրա օգնական Ացիկյանի և վարչակազմի ու միլիցիայի այլ պաշտոնյանների նկատմամբ, ովքեր կատարել էին պաշտոնետեսուչ և այլ քրեական հանցագործություններ՝ իշխանության հակաօրինական անգործություն, բռնաբարություն՝ զուգորդված պղծման հետ, ապօրինաբար ազատությունից զրկում, ծեծ, խոշտանգում և այլն (Ֆ. 198, ց. 1, գ. 1, թ. 23):

Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու միլի-  
ցիայի տեսուչ Բարգամյանցը 1919 թ. հոկտեմ-  
բերի 2-ին Ներքին գործերի նախարարին ներկա-  
յացրել էր «Զեկուցում՝ Ալեքսանդրապոլի Քաղա-  
քային միլիցիայի մասին», ուր նկարագրվում է  
միլիցիայի պաշտոնյաների աշխատանքի ոճը.  
«Որոշումներ կայացնելու գրքի բացակայու-  
թյունը անհնարին դարձրեց պարզելու, թե ինչպիսի  
հանցագործություններ են կատարվել, դրանցից  
որոնք են բացահայտված, ով և ինչ հանցագոր-  
ծությունների համար է ձերբակալված: Օրդեր-  
ների գրքի բացակայությունը անհնարին դարձ-  
րեց պարզելու, թե ում կարգադրությամբ, երբ,  
ու՞մ մոտ, ինչպիսի նպատակով և ու՞մ կողմից են  
կատարվել խուզարկությունները և ինչպիսի ար-  
դյունքներ են տվել խուզարկությունները: Ինչպես  
պարզվել է, խուզարկությունները կատարվում  
էին և տեղամասային կոմիսարների կարգադրու-  
թյան հիման վրա, առանց Միլիցիայի պետի գի-  
տություն և գրավոր հրամանի...: Այսպիսի շարա-  
շահումները, թերությունները, իր պարտականու-  
թյունները չհասկանալը կարելի է բացատրել են-  
թակայության կարգով պործողությունների վերա-  
հակողության լրիվ բացակայությամբ: Միլիցիայի  
պետին հայտնի չէր, թե ինչ է կատարվում տեղա-  
մասերում, կոմիսարները ոչինչ չգիտեին՝ իրենց օգ-  
նականների գործողությունների մասին, որի ա-  
պացույցը կարող է ծառայել այն փաստը, որ ինչ-  
որ դողություն համար... ձերբակալվել էին 15

կանայք, տղամարդիկ և օրիորդներ: Նրանք պահ-  
վել էին մոտ 15 օր, նրանց նկատմամբ կիրառվել  
են իսկական տանջանքներ, առանց տարբերելու  
սեռը և հասակը:

Բռնաբարվել էին կանայք, և այդ բոլորի մասին  
Միլիցիայի պետին ոչինչ հայտնի չէր: Նույնիսկ կո-  
միսարը քննիչի մոտ արդարանում էր նրանով,  
որ չգիտեր, թե ինչ էր կատարվում կոմիսարիա-  
տում: Միայն պատահականորեն իմանալով այդ  
մասին, և ծանոթանալով գործի բոլոր հանգամանք-  
ների հետ՝ քննիչը կարգադրեց ազատել ձերբակա-  
լվածներին, իսկ պաշտոնեական անձինք հանձնվե-  
ցին դատարանին (Արտակարգ Դատարանին:— Ռ.  
Ա.): Զկար ոչ մի կարգապահություն՝ ինչպես անձ-  
նակազմի մոտ, նույնպես և միլիցիոներների կազ-  
մում: Ալեքսանդրապոլի Քաղաքային միլիցիային  
կից կար 200 հեծյալ և հետիոտն միլիցիոներներ՝  
այնպիսի քաղաքի համար, ինչպիսին Ալեքսան-  
դրապոլն է՝ բավականին ուժեղ հաստիք: Սակայն  
քաղաքում չկար ոչ մի կարգ ու կանոն: Նույնիսկ  
չկային պահակակետեր: Պանդոկներ և առհասարակ  
խմարան հաճախելը՝ ինչպես անձնակազմի  
պաշտոնյաների կողմից միլիցիոներների հետ  
համատեղ, նույնպես միլիցիոներների կողմից,  
ևրանց փողոցում երևալը հարբած վիճակում՝  
ուղորական երևույթ էր: Եվ դրա համար է, որ  
աղգաբնակչությունը այդ հիմնարկության նկատ-  
մամբ շունի ոչ մի վստահություն, և միլիցիան  
ոչ մի հեղինակություն չի վայելում» (Ք. 201, ց.



14, գ. 294, թ. 242): Իսկ Կարսի քաղաքացիական նահանգապետը ներքին գործերի նախարարությանը գրել էր. «Կարսի տեղամասի կոմիսար Քալանյանը իր շուրս միլիցիոներներին հետ կրակ է արձակել բանտում՝ ձևացնելով վտանգավոր հանցագործի փախուստ: Այսպիսին են ժամանակակից գործիչները» (Ֆ. 201, ց. 1, գ. 287, մաս I, թթ. 281—282):

Արտակարգ Քննչական Հանձնաժողովը, քննության առնելով Ղարաքիլիսայի Քննչական տեղամասի (Հայաստանի տարածքը բաժանված էր 30 Քննչական տեղամասերի:— (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 84) քննիչ Նիկոլայ Խեչուճյանի կողմից պաշտոնեական հանցագործություններ կատարելու վերաբերյալ գործը, պարզել էր, որ վերջինս կատարել է շորս տասնյակից ավելի քրեորեն պատժելի արարքներ՝ ընթացք չտալով սպանությունների, ավազակային հարձակումների, կողոպուտների, ծեծի, խոշտանգումների և գողությունների, վիրավորանքի, շորթումների և այլ կատարված արարքների վերաբերյալ հաղորդումներին (Ֆ. 201, ց. 1, գ. 298, մաս III, թ. 605):

Քրեական գործեր հարուցվելին Ղարաքիլիսիայի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Էջմիածնի, Դարալագյազի, Դիլիջանի, Նոր Բայազետի գավառային կոմիսարների, Երևանի գավառի, Երեվանի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետի գավառի, Էջմիածնի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետ քաղաքի, Էջմիածնի գավառի,

Ղարաքիլիսայի գավառի միլիցիայի պետերի և այլ պաշտոնյաների նկատմամբ:

Քրեական հետապնդում էր սկսված ՆԳՆ, Պարսի, Ֆինանսների, Ժողովրդական կրթության, Արդարադատության և այլ նախարարություններում, Զինվորական, Փոստային և հեռագրային, Երկաթգծի և այլ գերատեսչություններում, Ինժեներական, Հողագործության և այլ վարչություններում աշխատող տասնյակ պաշտոնատար անձանց նկատմամբ:

Կալանավորվեցին Հայաստանի Խորհրդարանի անդամ Սիրակ Գրիգորյանը, Խորհրդարանի Գրասենյակի Պետ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ (Ֆ. 206, ց. 1, գ. 118, թթ. 128—129):

Հետազայում ընդունվեց Երևանի Դատաստանական պալատի Հատուկ ներկայության մասին Կանոնադրությունը, որով վերացվեց Արտակարգ Քննչական Հանձնաժողովը և Արտակարգ Դատարանը:

Հետ Կանոնադրության, պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ բոլոր գործերը հարուցվում էին համաձայն ցարական Ռուսաստանի ժամանակավոր կառավարության 1917 թ. 15/28-ը ապրիլի Օրենքի:

1920 թ. հունվարի 31-ին Երևանի Դատաստանական պալատի Դատախազը Արդարադատության նախարարին էր ներկայացրել «Պաշտոնեական հանցագործությունների դեմ պայքարելու մասին ժամանակավոր օրենքի» նախագիծը: Նախագիծում,

որի լրիվ վերնագիրն էր՝ «Կարևոր պետական և հասարակական բնույթ ունեցող պաշտոնեական հանցադործությունների որոշ տեսակների դեմ պայքարելու ժամանակավոր օրենք», ասված էր. «Սանր փորձությունների պահին, երբ Հայրենիքը իրեն փրկելու համար պահանջում է բոլոր ստեղծագործ ուժերի լարում... որոշ շարամիտ պաշտոնեական անձինք սկսել են թույլ տալ հանցավոր անփութություն և իշխանազանցություն և ճակատադրի կողմից նվիրված ազատությունը ու ժողովրդի կողմից ցուցաբերած վստահությունը դարձրել են իրենց անձնական բարեկեցության բավարարման աղբյուր, և իրենց պաշտոնեական դիրքը օգտագործում են իրենց ստոր շահադիտական ու հակապետական նպատակներին հասնելու համար» (Ֆ. 206, ց. 1, գ. 28, թ. 28):

Վարչակազմում և միլիցիայում տիրող բարձր մասին Ղարաքիլիսա-Գիլիջան Տեղամասի Դատախազ Ա. Մազաուզյանը Արդարադատության նախարարին ուղղված իր զեկուցագրում 1920 թ. փետրվարի 23-ին գրել է. «Վարչակազմի մեր ներկայացուցիչները, ջանալով աչքի ընկնել ղեկավարության առաջ կամ էլ այլ նկատառումներից ելնելով, հետաքննություն կատարելիս բռնում են առաջին իսկ պատահած մարդուն, խեղաթյուրում փաստերը, կամ խոշտանգումների միջոցով կորզում սուտ խոստովանություններ՝ հանցագործություն կատարելու մեջ, ձերբակալում մարդուն և, սահմանափակվելով միայն

խոստովանությամբ, դադարեցնում հետագա քննությունը և ղեկավարությունը տեղեկացնում իրենց փայլուն գործունեության մասին» (Ֆ. 206, ց. 1, գ. 117, թ. 217): Օրինակ՝ Ղարաքիլիսայի կոմիսարը միլիցիայի պետ Մամիկոնյանի հետ միասին սպանության մեջ կասպածյալներ Արամ Մխիթարյանի, Գարեգին Հովսեփյանի և Սարգիս Մխիթարյանի նկատմամբ կիրառել էին «միջնադարյան ինկվիզիցիայի» դարաշրջանը հիշեցնող տանջանքներ: Ձերբակալվածները հատուկ եղանակով կապվել էին հրացանափողին և խոշտանգվել: Նրանց մարմինը դաղվել է շիկացած երկաթե ձողերով, որի հետևանքով նրանք խոստովանեցին և ցույց տվեցին դրդիչներ Տիգրան Ասոյանին և Աղաբեկ Մխիթարյանին: Դրանից հետո միլիցիայի պետ Մամիկոնյանի և ուրյադնիկ Բագրամյանի կողմից կասկածյալների տներում կատարվեցին խուզարկություններ՝ առանց ձևակենսությունները պահպանելու, և այդ խուզարկությունները ուղեկցվում էին դրամի և այլ շարժական գույքի ավազակային հափշտակությամբ: Ձերբակալված չորս անձինք, որոնք խոստովանել էին, սպանվեցին միլիցիայի կողմից, իսկ գյուղից նրանց դեպի ք. Ղարաքիլիսա ուղեկցող Վարդանովը եղածը բացատրեց որպես փախուստի դիմելու փորձի հետևանք» (Ֆ. 206, ց. 1, գ. 118, թ. 101):

Գավառային վարչակազմի ու միլիցիայի ընդհանուր բնութագիրը տալու համար Մազաուզյանը ներկայացրել էր այն գործերի վերաբերյալ

Տեղեկագիրը, որտեղ բերված էին պաշտոնեական հանցագործությունների մասին փաստեր, նշելով, որ «միլիցիոներներին խոշտանգման ու շորթման մեջ մեղադրելու վերաբերյալ հսկայական գործերի քանակը նույնիսկ հաշվառման չի ենթարկվում» (Ֆ. 206, ց. 1, գ. 117, թ. 217):

Հանցագործությունների բացահայտման ու հանցավորության աճը նվազեցման պատճառով նա անհրաժեշտ է համարել կատարել հետևյալը՝

1. Ներքին գործերի նախարարության լիակատար չմիջամտելը դատական գործերին:

2. Իրենց վարկաբեկած միլիցիայի բոլոր պաշտոնյաների հեռացում:

3. Միլիցիայի պաշտոնյաների լիակատար ենթարկում դատախազական հսկողությանը և դատական տեղերի բոլոր օրինական պահանջների անառարկելիորեն ու ճիշտ կատարում և լիակատար աջակցություն (Նույն տեղում):

Միայն 1920 թ. փետրվարին քննիչների վարույթում գտնվող զավառային և տեղամասային կոմիսարներին ու միլիցիայի պետերին մեղադրելու վերաբերյալ Տեղեկագրի համաձայն (կար և այսպիսի «Տեղեկագիր»), դրանց թիվը հասել է 60-ի (Նույն տեղում, թ. 219): Նույն տարվա մարտ ամսին ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդարյանը Հայաստանի Խորհրդարանին է ներկայացրել «ՆԳՆ Վարչակազմի ու միլիցիայի 1920 թ. սմետայի և հաստիքների նախագիծը», նշելով, որ «Հատուկ ուշադրություն է դարձ-

ված Հայաստանի Տարածքի Վարչակազմին ու միլիցիային: Պետության այս օրգանի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը իմ կողմից լրիվ հասկանալի է, քանի որ բոլոր պետություններում, ուր իշխում է իրավակարգը, միլիցիան հանդիսանում է այն անկյունաքարը, որի վրա խարսխված է պետության ապահովությունն ու հանգստությունը» (Ֆ. 199, ց. 1, գ. 160, թ. 32):

Նախարարների Խորհրդի նախագահ Ալ. Խատիսյանի կողմից 1920 թ. մարտի 2-ին իրենց ված Շրջաբերականում ասված էր. «Նորակազմ պետության մեջ անշուշտ պետական ծառայողների ապարատը առաջին ամիսներում չի կարող լինել միանգամայն գոհացուցիչ, և կարգադրությունները կատարելու տեխնիկական նույնպես չի կարող չկաղալ: Սակայն Հայաստանի պետության համար այդ շրջանն արդեն անցել է: Այժմ կառավարությունն ու ազգաբնակչությունը հրավունք ունեն պահանջելու իրենց բոլոր ծառայողներից գիտակից և գաղափարական վերաբերմունք դեպի իրենց ծառայությունը, տնտեսումն պետական միջոցների ու նյութերի, ամեն մեկի մեջ տեսնելու ձևներեցություն, միաբանություն, կորպորատիվ պատվի զղացում և բիտակցություն, որ մեր օրերում ամեն մի ծառայող լուծում է մեծ պատմական խնդրի մի մասը» (Ֆ. 210, ց. 1, գ. 6, թ. 34):

Սակայն «պետական ծառայողների ապարատը» չդրսևոեց «գիտակից և գաղափարական վերա-

բերմունք դեպի իրենց ծառայությունը» և այնպես էլ չգիտակցեց, որ «լուծում է մեծ պատմական խնդրի մի մասը»: Պարզվեց, որ հանցավորության կառուցվածքում պաշտոնեական հանցագործությունները իրենց տեսակարար կշռով գրազնեանում են առաջին տեղը (Ֆ. 199, ց. 1, գ. 162, մաս II, թ. 338):

1920 թ. մայիսի 5-ին Խորհրդարանը ընդունեց Օրենք՝ «Պետական ծառայողների և բանվորների գործազուրկ ու սաբոտաժի և այլ ծառայողների ու բանվորների ընդունելության և արձակման կարգի մասին»: Այդ Օրենքի համաձայն «Պետական հաստատությունների ծառայողների ու բանվորները գործազուրկ ու սաբոտաժը համարվում է պետական հանցանք և նրանց հեղինակները պետք է պատժվեն իբրև պետական հանցագործներ՝ համաձայն Քրեական Պատժագրի սահմանված օրենքների» (Ֆ. 210, ց. 1, գ. 1, թ. 116): Իսկ նախաբարների Խորհրդի 1920 թ. մայիսի 11-ի նիստում որոշվեց Օրենքի դրույթները տարածել նաև «հասարակական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողների և բանվորների վրա» (Նույն տեղում):

Ներքին գործերի ժամանակավոր նախարար Ա. Զամալայանը 1920 թ. մայիսի 13-ին հրապարակեց հետևյալ հրամանը. «Ստանձնելով ժամանակավորապես Ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ սրանով հայտարարում եմ ի դիտություն Ներքին

գործերի վարչության բոլոր օրգանների պաշտոնյաներին՝

1. Այն պաշտոնյան, որ կմերկացվի զեղծում կատարելիս, կաշառք վերցնելու, խուզարկության ժամանակ իրեր սեփականացնելու, քաղաքացիների վրա բռնություն դնելու և շանտաժի մեջ՝ առ ուշը 48 ժամվա մեջ, բանտարկությունից մինչև մահվան պատիժ կստանա, համաձայն Արտակարգ Դատարանի համար սահմանված օրենքների:

2. Այն պաշտոնյան, որ կթերանա կատարելու իր պարտականությունները, կամ կանցնի իր իրավունքների սահմաններից, կենթարկվի բանտարկությունից մինչև տաժանակիր աշխատանքի, համաձայն նույն օրենքների արամբանությունը» (Ֆ. 201, ց. 1, գ. 280, թ. 45): Իսկ 1920 թ. մայիսի 20-ին Երևանի «առևտրականները և խանութպանները» հրավիրվել էին Խորհրդարան՝ «լսելու ներքին գործերի ժամանակավոր նախարար Ա. Զամալայանի հայտարարությունը՝ սպեկուլյացիայի դեմ ձեռք առնելիք միջոցների մասին» (Նույն տեղում, թ. 49):

Արդարադատության նախարար Ա. Զիլինգարյանը 1920 թ. սեպտեմբերի 20-ին հետևյալ «Բաբատարգիրն» է հղել նախարարների Խորհրդին. «Մանր փորձությունների այս օրերում, երբ Հայրենիքը կարիք ունի լարելու իր բոլոր ուժերը՝ իր պոլությունը փրկելու և բազմաշարշար Հայ ժողովրդի արյունով ձեռք բերած պետական իրավա-

կարգը վերջնականապես հաստատելու համար, մի շարք շարամիտ պաշտոնյաներ կատարել են և շարունակում են կատարել ամեն տեսակ պաշտոնավարության հանցանքներ և դրանով անուղղելի վնաս են հասցնում մեր մանուկ պետությանը և նույնիսկ ժողովրդի գոյությանը: Սրբազան ազատությունը և ժողովրդի իրենց ցույց տրված վստահությունը նրանք դարձնում են աղբյուր՝ իրենց անձնական բարեկեցության և, օգտվելով իրենց դիրքից և պաշտոնի ընձեռած դրությունից, իրենց ստոր շահադիտական և հակապետական նպատակներին հասնելու համար կորզումներ և պետական գույքի հափշտակություն են անում, նենգամտորեն կազմալուծում են պետական հիմնարկությունները և այլն: Պաշտոնատարների զործած հանցանքները սպառնում են ստանալ համաճարակի բնավորություն: Կատարված հանցանքների գեթե 50 տակոսը պաշտոնյաներին է վերաբերվում (ընդգծումը մերն է:— Ռ. Ա.): Նկատի ունենալով մի կողմից հասարական բարքերի ընդհանուր անկումը և պատերազմի ու հեղափոխության հարցում ընդհանուր հոգեկան վիճակը, և մյուս կողմից՝ այն մեծ վտանգը, որ ներկա բացառիկ պայմաններում սպառնում է մեր նորակազմ պետությանը պաշտոնյանների կատարած հանցանքները, Նախարարությունը անհրաժեշտ է գտնում կովել ահավոր շարիքի դեմ արմատական ու արտակարգ միջոցներով: Այդ միջոցներից մեկը Նախարարությունը

նր համարում է հանցավոր պաշտոնյանների կրելիք պատիժների խստացումը ընդհանրապես և մահվան պատժի ժամանակավոր կիրառումը՝ մասնավորապես» (Ք. 199, ց. 1, գ. 162, մաս II, թ. 338): Հատկանշական է, որ «Բացատրագրի» նույն տեքստը Նախարարների խորհուրդ առաջին անգամ ուղարկվել էր դեռ մայիսի 19-ին, սակայն ոչ մի անձագանք չգտնելով՝ Ա. Զիլինգորյանը կրկին է դիմել Նախարարների խորհրդին (նույն տեղում, թ. 339):

Պաշտոնեական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1920 թ. հոկտեմբերի 2-ին հաստատվեց «Ժամանակավոր օրենք՝ պաշտոնեական հանցանքների մասին»: Օրենքը սահմանում էր «պաշտոնատար անձ» հասկացությունը. «Պաշտոնյա համարվում է ամեն մի անձ, որը մշտական ծառայության մեջ է կամ որևէ ժամանակավոր հանձնարարություն է կատարում պետական կամ հասարակական հիմնարկություններում, ինչպես... նաև կոոպերատիվների և այլ հանրային բնույթ ունեցող հաստատությունների մեջ»: «Պաշտոնյան, որը կաշառք կվերցնի փողով, իրով կամ որևէ այլ ձևով իր պաշտոնի պարտականությունները կատարելու համար», դատապարտվում էր մեկ տարվա բանտարկությունից մինչև չորս տարի տաժանակիր աշխատանքի: Իսկ եթե պաշտոնատար անձը «կաշառք կվերցնի իր պաշտոնի պարտականությունները խախտելու համար» նրան սպա-

սում էր դատապարտում՝ երկու տարվա բանտարկությունից մինչև վեց տարվա տաժանակիր աշխատանք: «Պետական վարչակարգին, տնտեսությանը կամ ազգաբնակչությանը» այդ հետևանքով ծանր վաս պատճառելու դեպքում՝ հանցավորը դատապարտվում էր շորս տարվա տաժանակիր աշխատանքից մինչև մահապատժի: Քրեաբեմն պատժելի էր և կաշառք բեղունելու կամ պահանջելու փորձը:

Չորս տարվա տաժանակիր աշխատանքից մինչև մահվան պատիժ էր նախատեսված «պետական վարչակարգին, տնտեսության կամ ազգաբնակչության համար՝ պաշտոնի շարաշահման հետևանքով պաշտոնյա անձի գործողություններից առաջացած մեծ վնասը, ինչպես նաև նույնանման վնաս պատճառելը «սաբոտաժի պատճառով»: Իսկ «պաշտոնյան, որ իր պաշտոնի բերումով, իր ձեռքին ունենալով որևէ պետական, հասարակական կամ մասնավոր գույք կամ կոոպերատիվ, պետական կամ հասարակական կամ պետական կամ մասնավոր կաշքեր, դրանցից օգտվի իր սեփական կարիքների համար կամ այդ գույքը և եկամուտները փոխ տա ուրիշին, առանց իր իշխանությունից դրա համար պարզորոշ թույլտվության ստացած լինելու կիրացնել, կփշացնել կամ կվատնել այդ գույքից կամ եկամուտներից որևէ բան, նայելով գործի հանգամանքներին, կղատապարտվի մեկ տարվա բանտարկությունից մինչև մահվան պատիժ»: Եվ վերջապես՝ «պաշ-

տոնյան, որ ինքնակամ կերպով, առանց պատշաճ իշխանության թույլտվության, կհեռանա պաշտոնից, նայելով գործի հանգամանքներին. կղատապարտվի մեկ տարվա բանտարկությունից մինչև շորս տարվա տաժանակիր աշխատանքի: Իսկ եթե այդ ինքնակամ հեռացման պատճառով մեծ վնաս կհասցվի պետական վարչակարգին, տնտեսությանը կամ ազգաբնակչությանը, հանցավորը կղատապարտվի շորս տարվա տաժանակիր աշխատանքից մինչև մահվան պատիժ»: Սույն օրենքի ուժը տարածվում էր միայն «քաղաքացիական պաշտոնյաների» վրա և այն ստորագրել էր Նախարարապետ Համ. Օհանջանյանը (Ֆ. 210, ց. 1, գ. 1, թ. 125):

Մինչդեռ Քննչական տեղամասերում կուտակվել էին «մեծ քանակությամբ գործեր, զխավորապես այնպիսիները, որոնք ունեն պետական նշանակություն և առաջացնում են հասարակական ուշադրությունը: Այսպես, համարյա բոլոր պաշտոնական և այսպես՝ կոչված «լիազորական գործերը» մեացել են առանց շարժի, իսկ մեղավորները՝ ազատության մեջ: Միայն Երևան քաղաքում և էջմիածնի գավառում գործերի քանակը հասնում է մինչև 350-ի», — այսպես է գրել 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի Օկրուգային դատարանի նախագահ Փարսադեանովը Արդարադատության նախարարին (Ֆ. 206, ց. 1, գ. 107, թթ. 354—355):

## V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեր քաջարի զորքերը ներկայումս ամենածանր պայմաններում կռիվներ են մղում՝ ապահովելով Հայաստանի սահմանները հյուսիսից ու հարավից: Մինչ գիտակից քաղաքացիները ծառայում են, զորքերի մեջ, մյուսները ամոթաբար թւրքնվում են թիկունքում՝ զերադասելով տաք անկյուն ու անկողինը ռազմական կյանքի շարձարանքից ու զրկանքներից:

Ամոթ ու նախատինք այն մարդկանց, որոնք արժանի չեն գիտակից քաղաքացու անվունը: Մեր զորքի շարքերը նոսրանում են հիվանդությունից ու կռվի կորուստից: Ամեն կողմից շարքերը խտացնելու պահանջներ են ստանում: Այնինչ իմ հայտարարած ներկայանալու օրը անցավ, իսկ ծառայությունից խուսափող դասալիքները ազատ զբոսնում են փողոցներում՝ շուգենալով զորքի շարքերը մտնել, բարձր գնահատելով իրենց թանկ կյանքն ու առողջությունը:

Ամաչեցե՛ք փոքր հոգևությունից, շտապեցե՛ք դեպի հավաքական կենտրոններ՝ ի կատարումն հայտարարված գորակոչի»: Հանրապետության Զինվորական նախարար Հախվերդյանը այսպիսի կոչով էր դիմել Հայաստանի ազգաբնակչությանը (Ֆ. 199, ց. 1, գ. 91, թ. 34):

1918 թ. նոյեմբերի 21-ին Զինվորական նախարարը հետևյալն է գրել ներքին գործերի նախարարին. «Նկատի ունենալով, որ շատ քաղա-

քացիներ խուսափում են զինվորական ծառայությունից, Հայաստանի Խորհրդի Զինվորական Հանձնաժողովը 1918 թ. նոյեմբերի 18-ին որոշել է. բոլոր կառավարական և հասարակական հիմնարկություններում, այդ թվում և միլիցիայում, անմիջապես ծառայությունից արձակել զորակոչի տարիքի բոլոր երիտասարդ մարդկանց, առաջին հերթին 20-ից մինչև 25 տարեկան» (Ֆ. 201. ց. 1, գ. 83, թ. 8): Իսկ մեկ ամիս անց Զինվորական նախարարը գրել է. «Զինվորական իրադրությունը պահանջում է զորքերի համալրում մարդկանցով: Մինչդեռ կա դասալիքների զանգված ու ծառայությունից խուսափողներ, որոնք ազատ ապրում են քաղաքում և դավաճներում: Նրանք, ովքեր նշված ժամանակում չեն ներկայանա հավաքակետեր՝ կձերբակալվեն Հատուկ զինվորական պետերի կողմից և կհանձնվեն դատարանին՝ պատերազմական դրուժյան ժամանակի օրենքով» (Նույն տեղում, թ. 10):

Ընդունվեց ժամանակավոր օրենք՝ «Զորքի դասալքությունից դեմ կռվելու մասին»: Օրենքում ասված էր.

«1. Բոլոր պետական, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ինչպես և մասնավոր անձանց, արգելվում է ծառայության ընդունել նրանց, ովքեր զինվորական ծառայության ավարտման կամ ծառայությունից ազատման վկայական չեն ներկայացնի:

2. Զկատարող պաշտոնեական և մասնավոր անձինք ենթարկվում են բանտարկության՝ մեկից մինչև վեց ամիս, կամ դրամական տուգանքի՝ 1000-ից մինչև 10.000 ուրբի:

3. Իր ժամանակին ծառայության շնորհայացած զինվորականը կամ ինքնակամ իր զորամասից փախածը համարվում է դասալիք և ենթարկվում է ըստ Զինվորական Պատժագրքի բանտարկության՝ երկուսից մինչև չորս ամիս, կամ կալանավորման՝ մեկից մինչև երեք ամիս:

Բացի այդ, նրա ծառայության ժամանակը ավելացվում է ամեն մի ամսի բացակայության համար վեց ամսով՝ հաշվելով պակաս ամիսը որպես լրիվ ամիս:

4. Գյուղական կոմիսարներն ու միլիցիայի բոլոր ծառայողները պարտավոր են ձերբակալել իրենց շրջանում թաքնվող դասալիքներին և ներկայացնել այդպիսիներին համապատասխան զինվորական պետին, իսկ եթե անհնար է նրանց ձերբակալել, պետք է այդ մասին հայտնեն նույն զինվորական պետին: Հակառակ դեպքում նրանք՝ կոմիսարներն ու միլիցիայի ծառայողները, որոնց շրջանում կգտնվի դասալիքներ, կենթարկվեն պատժի կամ դրամական տուգանքի՝ մինչև 3000 ուրբ., իսկ եթե ապացուցվի, որ նրանք տեղյակ են եղել իրենց դասալիքների մասին, ապա կպատժվեն ըստ Պատիժների Օրենսգրքի: Զինվորական ծառայության մեջ գտնվող փախստականներին (զինվոր կամ նավաստի), ինչպես և

բանակի կամ նավատորմի պահեստի զինակոչից կամ զինավարժությունից խուսափողներին թաքցնողները, ենթարկվում են բանտարկության՝ երկուսից մինչև չորս ամիս, կամ կալանավորման՝ ութ շաբաթից մինչև երեք ամիս:

5. Դասալիքների հետ ապրողներն ու նրանց ակնհայտ թաքցնողները ենթարկվում են քանտարկության՝ մեկից մինչև վեց ամիս, կամ դրամական տուգանքի՝ մինչև 10.000 ուրբ., և զբրկվում են պետական որևէ նպաստից:

6. Դասալիքի հափշտակված պետական հագուստեղենն ու զենքը ակնհայտ իրենց մոտ թաքցնող բոլոր մասնավոր անձինք ենթարկվում են պատասխանատվության՝ շուկայի գնի եռուպատիվ վճարումով» (Ք. 201, ց. 1, գ. 280, թ. 26):

Հետագայում ընդունված «Զորքերի շարքերը զորակոչի մասին» Օրենքի համաձայն զորակոչյալին տարիքը 25-ից բարձրացվեց մինչև 28 տարեկան (Նույն տեղում, թ. 27):

1919 թ. մարտի 5-ին Հայաստանի Տարածքի կոմիսարը հետևյալ հեռագիրն է հղել Նոր Բալասղետի դավառային կոմիսարին. «Ներքին գործերի նախարարի և զինվորական իշխանությունների մոտ եղած տեղեկություններից երևում է, որ Ձեր դավառում դասալքությունը վիթխարի կերպով աճում է: Վարչակազմը այս հարցում անզորության է մատնվել: Կրկին խստագույնս հանձնարարում եմ տեղամասային գյուղական



հասարակական միլիցիայի կոմիսարներին՝ ձեռնարկել բոլոր միջոցները դասալիքներին ձերբակալելու համար՝ հանձնելով զինվորական իշխանությունը...: Զգուշացնում եմ՝ այս կարգադրությունը չկատարող պաշտոնատար անձինք կենթարկվեն խիստ պատժի» (Ֆ. 201, ց. 1, գ. 83. թ. 43):

Ալեքսանդրապոլի գավառում 1919 թ. հունվարի 1-ից մինչև մարտի 23-ը ընկած ժամանակահատվածը ձերբակալվել էր 1358 դասալիք-էջմիածնի գավառում՝ հունվարի 1-ից մինչև մարտի 15-ը «բացի 567 դասալիքներից, շատ այսպիսի անձինք տեղամասային կոմիսարներին կողմից ձերբակալվել և անմիջապես հանձնվել են տեղական կոմիսարներին»: 1919 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում նոր Բայազետի գավառում ձերբակալվել էր 392 դասալիք (Ֆ. 201, ց. 1, գ. 293, մաս II, թթ. 473—486): Շատ դասալիքներ, խույս տալով, փախչում էին Վրաստան: Եվ անհրաժեշտություն ծագեց ուղեկալ հիմնել մինչև Սանահին և սայլուղի, որը դուրս է գալիս դեպի Այրում (Նույն տեղում, թթ. 93, 100, 190):

Նույն օրերին Հայաստանի Զինվորական Շտաբի պետ զեներալ-մայոր Գուլուխանովը ներքին գործերի նախարարին գրել է. «Գուրծուղման ժամանակ շրջագայելով Ղարաքիլիսա, Քուլազերան և Զալալ-օղլի շրջանի գյուղերով, ես նկատեցի մեծ քանակությամբ դասալիք-զին-

վորներ, որոնք շրջում էին գյուղում: Դասալիք առողջ, ջահել տղային, կարելի է տեսնել և գյուղի խանութում՝ մանր առևտրով զբաղվելիս: Ինձ մոտենում էին տեղի միլիցիայի հետ միասին և խոսում ինձ հետ, բոլորովին չամաշելով ու չվախենալով, որ նրանք հանցագործներ են, և իրենց կարող են ձերբակալել: Ողջ գյուղը, հազվադեպ բացառություններով, հազած է զինվորական հագուստ, հաճախ նույնիսկ ուսադիրներ: Հաս երևույթին, տեղական վարչակազմը բոլորովին էլ չի պայքարում այդ շարիքը դեմ և մտադիր չէ ձերբակալել դասալիքներին ու պետական զգեստը գողացողներին՝ այն ժամանակ, երբ հայկական բանակի շարքերը նոսրանում են օր-օրի և նա քայլում է համարյա տկլոր...» (Ֆ. 201, ց. 1, գ. 280, թ. 85):

1919 թ. հունիսի 24-ին ընդունվեց «Օրենք՝ մահվան պատժի մասին»: «Որպես պատժի ամենաբարձր արտիճան, — ասված էր Օրենքում, — մտցնել մահվան պատժ՝ գնդակահարումով, բացի Օրենքի համապատասխան հոդվածներում մատնանշված պատիժներից, այն անձանց համար, որոնք հետևյալ ժանր հանցանքներից մեկի մեջ էլ բռնվեն՝

1. Ով Հայաստանի Հանրապետության դեմ Պետական դավադրություն կանի:

2. Ով կմասնակցի գոյություն ունեցող իշխանության դեմ ակնհայտնի ապստամբության:

3. Ու՛լ դիտավորյալ կոչնչացնի և կփշացնի հեռագրաթելը կամ երկաթուղին՝ եթե նույնիսկ շարագործի գործողությունը կատարված լինի ճանապարհորդներին կամ տեղափոխող գույքին վնաս հասցնելու ոչ ուղղակի մտադրությամբ:

4. Զինվորական քաղաքացիներից նա, ով՝  
ա) կփախչի թշնամու մոտ պատերազմի դաշտից, ինքնազուլուս կթողնի իր տեղը կովի ժամանակ և կհրաժարվի կովին մասնակցելուց.

բ) կհորդորի, խորհուրդ կտա կամ կգրգռի հանձնվել թշնամուն, կամ կփախչի, կամ կհրաժարվի թշնամուն դիմադրելուց.

դ) առանց դիմադրության գերի կընկնի.

դ) թշնամու հանդեպ պահակից ինքնազուլուս կհեռանա.

ե) պետի հրամանների իրագործմանն խանգարի, նրանց դեմ բացարձակ կապստամբի կամ կգրգռի.

զ) կհարձակվի պահակի և զինվորական պահակախմբի վրա և դիմադրի նրանց զենքով ի դիտավորյալ և սպանի պահակին.

է) զինվորական ծառայությունից խուսափելու համար մահատվության կամ այլ միջոցի դիմի.

ը) դիտավորյալ կոչնչացնի կամ կփշացնի թնդահոթները, զինանոցները, մթերանոցները և այլն.

թ) կհափշտակի, կվատնի կամ կգողանա պետական զենքը.

ժ) պատերազմական գերիներն ու թշնամու լրտեսները, եթե դիտավորյալ գործեն բանակի ապահովության դեմ և նպաստեն կամ օգնեն թշնամուն» (Ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 26):

Հայաստանի Զինվորական Շտաբի պետ գեներալ-մայոր Դուլուխանովը ներքին գործերի նախարարին գրում էր. «Գաժառային կոմիսարները զինապարտներին ուղարկում են Զինվորական պետի մոտ առանց անձը հաստատող վկայականի, և այդ հրամանի խախտումը վնասակար է անդրադառնում բանակի մարտական ու տնտեսական վիճակի վրա: Այս կարգի զինապարտները, շունենալով իրենց մոտ փաստաթղթեր, ներկայանալով հնարովի անուններով, ընդունվում են բանակի շարքերը և, պարենավորվելով, անպատիժ կերպով դասալքում են՝ ողջ պետական գույքի հետ միասին» (Ֆ. 201, ց. 1, գ. 280, թ. 53):

Իսկ Հայաստանի Հետևազորային դիվիզիայի պետին զեկուցվում էր, որ «ոչ միլիցիան, ոչ էլ կոմիսարները չեն՝ ընդառաջում՝ դասալիքներին իրենց զորամասերը ուղարկելու գործում» (նույն տեղում, թ. 71):

Դասալիքությունը, սակայն, է՛լ ավելի անեց, և հանցավորության կառուցվածքում զինվորական հանցագործությունները զբաղեցրին իրենց ուրույն տեղը:

«Դասալքությունը Հայաստանում ընդունել է զանգվածային բնույթ,— գրում էր Ղարաբաղի-

սայի գավառային կոմիսարը Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու միլիցիայի կոմիսար Առաքելովին:— Այն ունի խորը արմատներ և միայն ճնշման մեթոդներով արմատախիլ անել այս շարիքը հնարավոր չէ» (Նույն տեղում, թ. 96):

Իր հերթին, Հայաստանի Հանրապետության Զինվորական Շտաբի պետ Դուլուխանովը անհանդատանում էր. «Դասալքությունը չի կրճատվում: Քանի որ դասալիքները ապրում են իրենց դյուղերում ու քաղաքներում: Զորքերը՝ շունենալով համարում, հալումաշ են լինում և ի վիճակի չեն կատարելու իրենց վրա գրված ծառայությունը» (Նույն տեղում, թ. 93):

## Մ Մ Փ Ռ Փ Ո Ւ Մ

1918 թվականի գարնանը Երևանում, Դիլիջանում և Էջմիածնում ստեղծվեցին Հեղափոխական տրիբունալներ: Այդ տրիբունալները ոչ միայն չկարողացան արմատախիլ անել հանցավորությունն ու անարխիան, այլև անարդար ու բացահայտ կանխակալ արձակված դատավճիռներով «վերջնականորեն իրենց վարկաբեկեցին և անմտածված որոշումներով ապաբարոյականացրին ազգաբնակչությանը»:

Հեղափոխական տրիբունալները վերացվեցին 1918 թ. դեկտեմբերի 6-ի Օրենքով: Նույն Օրենքով դատական իշխանության կառուցվածքը հետևյալն էր. Հաշտարաբ դատավորներ, Օկրուգային դատարաններ, Դատաստանական պալատ, Հանրապետության Սենատ: Հաշտարաբ դատավորը միանձնյա իշխանություն էր, իսկ Օկրուգային դատարանը, Դատաստանական պալատն ու Սենատը՝ կոլեգիալ:

Միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի համաձայն, «Միլիցիան պարտավոր է մեկուսացնել անզգայության աստիճանի հարբածներին, հոգեկան չիվանդներին և այլ անձանց, եթե

նրանց ազատ մնալը անմիջական վտանգ է սպառնում իրենց և իրենց շրջապատին»:

Այս Օրենքի պահանջներին համապատասխան կատարվում էր մարդկանց մեկուսացումը հասարակությունից: Գոյություն ունեւ «հասարակության անվտանգության համար վնասակար տարր» հասկացությունը: Տասնյակ ու հարյուրավոր մարդիկ կարող էին (և ենթարկվում էին) արտադատական բանտարկության:

Իշխանութիւնների հնարավոր կամայականութիւնը օրինականացված էր, և ցանկացած մարդուն ազատությունից զրկելու իրավունքը մատուցվում էր որպես նրանց նկատմամբ հոգատարություն, քանի որ «նրանց ազատ մնալը անմիջական վտանգ է սպառնում իրենց և իրենց շրջապատին»: Իշխանությունների տեսակետից՝ հասարակությունը բաղկացած էր «հարբածներից, հոգեկան հիվանդներից և այլ անձանցից»:

Պարենի խիստ ճգնաժամը առանձնապես ծանր է անդադարձել դատապարտյալների վրա: Թեև սահմանված հաստիքներով Հայաստանի տարածքում պետք է գործէր 17 բանտ, գործում էր միայն 9-ը: Բանտերը իրենցից ներկայացրել են «վայրեր՝ մահվան դատապարտվածների համար»: — «Դատախազական հսկողությունն ու քննչական իշխանութիւնները զրկված են եղել հանցագործներին կալանքի տակ պահելու հնարավորութիւնից՝ գիտակցելով, որ բանտարկել՝ նշանակում է մահվան դատապարտել մարդուն:

Ուստի, հանցագործները մնում էին ազատութեան մեջ, և դատական ապարատը զրկված էր ճիշտ գործելու հնարավորութիւնից...: Ամենուր մոլեգնում էին տիֆը և համաճարակային հիվանդութիւնները»:

Դատարաններում փրեական գործերի փակը զերակշռել է փողափայտական գործերի փակելին:

1920 թ. մարտ ամսին Զինվորական Դատախազն առաջարկել է Օրենքի հետևյալ նախագիծը: «Նկատի ունենալով հանցավորութեան շահագանց մեծ աճը, Հայաստանի Հանրապետութեան տարածքը... համարել զինվորական դրութեան մեջ»:

Երկրի սոցիալ-տնտեսական ու փողափայտական բարդ իրավիճակը նպաստել է հանցավորութեան անին, իսկ հանցավորությունը, իր հերթին, խարխիլել սոցիալ-տնտեսական և փողափայտական հիմքերը:

Ըստ վիճակագրական տվյալների 1920 թ. դատարաններում քրեական գործերի քանակը շարունակել է գերազանցել քաղաքացիական գործերին: Օրինակ՝ Երևանի Օկրուգային դատարանում 1920 թ. հունվարի 1-ի դրութեամբ կար 368 քրեական և 239 քաղաքացիական գործ:

Պետական հանցագործությունների դեմ պայմարն ուժեղացնելու նպատակով 1920 թ. մայիսի վերջին ընդունվեց Օրենք՝ «Արտակարգ Դա-

տարանի ժամանակավոր օրենքի փոփոխման և լրացման մասին»:

Հանցավորության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ներքին գործերի նախարարը հետևյալ հանձնարարությունն էր տվել Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու միլիցիայի կոմիսարին. «Երկրում զարգացող անարխիայի, թալանի, ավազակության և այլ աննորմալ երեվոյթների կանխման նպատակով՝ լիազորում եմ Ձեզ... անձանց, որոնք մերկացվել են այս կամ այն հանցագործություններ կատարելու մեջ, ենթարկել վարչական (արտադատական) բանտարկության՝ երեք ամսից ոչ ավելի ժամանակով, Ձեր հայեցողությամբ»:

Այսպիսի արտադատական բանտարկությունը չնպաստեց հանցավորության դեմ մղվող պայքարին: Պրակտիկայում ֆրեական հանցագործության և վարչական զանցանքի միջև տարբերություն չտեսնելը շէր կարող նպաստել հանցագործությունների նվազեցմանը:

Անձի դեմ ուղղված չբացահայտված հանցագործությունների և սեփականության դեմ ուղղված չբացահայտված հանցագործությունների թիվը մեծ տոկոս էր կազմում: Հատկապես աճում էր դիտավորյալ սպանությունների թիվը: 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին միայն Դիլիջանի գավառում կատարվել էր 66 սպանություն և 4 սպանության փորձ:

Ինչպես վկայում են արխիվային տվյալները, մեծ տոկոս է կազմել նաև սպանությունների համար դատապարտված անձանց թիվը: 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին միայն Երևանի Օկրուգային դատարանի կողմից դատապարտված անձանց 38,2 տոկոսը մեղավոր էր ճանաչվել անձի կյանքի դեմ ուղղված հանցագործություններ կատարելու մեջ:

Հանցավորության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1919 թ. հուլիսի 21-ին ընդունվեց Օրենք, որի համաձայն «բոլոր անձինք՝ ինչպես քաղաքացիական, նույնպես և զինվորական զերտեսչության, դիտավորյալ սպանությունների, բռնաբարության, ավազակության ու կողոպուտի համար ընդդատյա են Հանրապետության Զինվորական Դատարանին»:

Անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը որոշգավառներում գրեթե հավասարվել էին: Օրինակ՝ Ղարաբաղի սպանությունները 1919 թ. հունվարի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարվել էր սպանության 58, իսկ զոհության՝ 60 դեպք: Երևանի Դատաստանական պալատի կողմից 1919 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին ապելյացիոն կարգով քննության առնված 63 քրեական գործերից 32-ը վերաբերվել են դիտավորյալ սպանություններին (50,8 տոկոս) և 17-ը՝ զոհություններին (27 տո-

կոս)։ Դիլիջանի գավառում 1919 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին կատարվել էր անձի կյանքի և առողջության դեմ ուղղված 91 հանցագործությունների դեպք և գողություն՝ 32 դեպք։

1920 թ. անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունները և սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմեցին «վիթ-խարի բանակ»։ Այն հայտնի է դառնում Երևանի Դատաստանական պալատի Դատախազ Մելիք-Աղամիրյանի կողմից գրված բացատրագրից այն մասին, որ «հիշատակված հանցագործությունների վերաբերյալ գործերի հանձնումը Ձինվորական Դատարանին հանդիսանում է պրակտիկական անիրականանալի՝ վերջինիս չհարմարվածության պատճառով, իր ներկա կազմով, քննելու այսպիսի վիթխարի քանակություններ գործեր»։

Սպանություններ, ավազակություն, թալան կատարվում էր նաև գիւղաբնակների նկատմամբ՝ փաստ, որը խոսում է հանցավորության մասշտաբների մասին։

1919 թ. հուլիսի 7-ին ընդունվեց Օրենք՝ «Հայաստանի Հանրապետության Արտակարգ Քննչական Հանձնաժողովի և Արտակարգ Դատարանի մասին»։

Օրենքում ասված էր. «Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության և լուծման համար ժամանակավորապես հաստատվում է Արտակարգ Քննչական Հանձնաժողով և Արտակարգ Դատարան»։

Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ բոլոր գործերը Դատական քննիչների վարույթից վերցվել և հանձնվել էր Արտակարգ Քննչական Հանձնաժողովի վարույթին։

Սկզբից ևեթ Հանձնաժողովը ստացավ ամենաքիչը 200—300 գործ։

Քրեական գործեր հարուցվեցին Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Էջմիածնի, Դարալագյազի, Դիլիջանի, Նոր Բայազետի գավառային կոմիսարների, Երևանի գավառի, Երնվանի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետի գավառի, Էջմիածնի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետ քաղաքի, Էջմիածնի գավառի, Ղարաքիլիսայի գավառի միլիցիայի պետերի և այլ պաշտոնյաների նկատմամբ։

Քրեական հետապնդում էր սկսված ՆԳՆ, Պարենի, Ֆինանսների, Ժողովրդական կրթության, Խնամատարության և վերաշինության, Արդարադատության և այլ նախարարություններում, Ձինվորական, Փոստային և հեռագրային, Երկաթգծի և այլ գերատեսչություններում, Ինժեներական, Հողագործության և այլ վարչություններում աշխատող տասնյակ պաշտոնատար անձանց նկատմամբ։

Կալանավորվեցին Հայաստանի Խորհրդարանի անդամ Սիրակ Գրիգորյանը, Խորհրդարանի Գրասենյակի պետ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ։

Հետագայում ընդունվեց Երևանի Դատաստանական պալատի Հատուկ ներկայության մասին

Կանոնադրութիւնը, որով վերացվեց Արտակարգ Քննչական Հանձնաժողովը և Արտակարգ Ղատարանը:

Ըստ Կանոնադրութեան, պաշտոնեական հանցադործութիւններին վերաբերյալ բոլոր գործերը հարուցվում էին համաձայն ցարական Ռուսաստանի Ժամանակավոր կառավարութեան 1917 թ. 15/28-ը ապրիլի Օրենքի:

Վարչակազմում և միլիցիայում տիրող բարքերի մասին Ղարաբեխիսա-Դիլիջան Տեղամասի Գատախազ Ա. Մազաուլյանը Արդարադատութեան նախարարին ուղղված իր զեկուցագրում 1920 թ. փետրվարի 23-ին գրել է հետևյալը. «Վարչակազմի մեր ներկայացուցիչները, ջանալով աչքի ընկնել ղեկավարութեան առաջ կամ էլ այլ նկատառումներից ելնելով, հետաքննութիւն կատարելիս բռնում են առաջին իսկ պատահած մարդուն, խեղաթուրում փաստերը, կամ խոշտանգումների միջոցով կորզում սուտ խոստովանութիւններ՝ հանցագործութիւն կատարելու մեջ, ձերբակալում մարդուն և, սահմանափակվելով միայն խոստովանութեամբ, զազարեցնում հետագա քննութիւնը և ղեկավարութեանը տեղակացնում իրենց փայլուն գործունեութեան մասին»:

Գավառային վարչակազմի ու միլիցիայի ընդհանուր բնութագիրը տալու համար ներկայացվել էր այն գործերի վերաբերյալ «Տեղեկագիրը»,

որտեղ բերված էին պաշտոնեական հանցագործութիւնների մասին փաստեր, ուր նշվել է, «Միլիցիոներներին խոշտանգման ու շոքման մեջ մեղադրելու վերաբերյալ հսկայական գործերի քանակը նույնիսկ հաշվառման չի ենթարկվում (ընդգծումը մերն է:— Ռ. Ա.)»:

Հանցագործութիւնների բացահայտման ու հանցավորութեան աճը նվազեցման նպատակով անհրաժեշտ էր համարվել կատարել հետևյալը:

«1. Ներքին գործերի նախարարութեան լիակատար շմիջամտելը դատական գործերին:

2. Իրենց վարկաբեկած միլիցիայի բոլոր պաշտոնյաների հեռացում:

3. Միլիցիայի պաշտոնյաների լիակատար ենթարկում դատախազական հսկողութեանը և դատական տեղերի բոլոր օրինական պահանջների անառարկելիորեն ու ճիշտ կատարում և լիակատար աջակցութիւն»:

Միայն 1920 թ. փետրվարին ֆենիչների վարույթում գտնվող գավառային և տեղամասային կոմիսարներին ու միլիցիայի պետերին մեղադրելու վերաբերյալ «Տեղեկագրի» համաձայն (Կար և այսպիսի «Տեղեկագիր») դրանց թիվը հասել էր 60-ի:

Նախարարների Խորհրդի նախագահ Ալ. Խատիսյանի կողմից 1920 թ. մարտի 2-ին իջեցված Շրջաբերականում ասված էր. «Նորակազմ պետութեան մեջ անշուշտ պետական ծառայողների ապարատը առաջին ամիսներում չի կարող լինել

միանգամայն գոհացուցիչ, և կարգադրութիւնները կատարելու տեխնիկան նույնպէս չի կարող չկաղալ: Սակայն Հայաստանի պետութեան համար այդ շրջանն արդեն անցել է: Այժմ կառավարութիւնն ու ազգաբնակչութիւնը իրավունք ունեն պահանջելու իրենց բոլոր ծառայողներին դիտակիյ և գաղափարական վերաբերմունք դեպի իրենց ծառայութիւնը, տնտեսումն պետական միջոցների ու նյութերի, ամեն մեկի մեջ տեսնելու ձեռներեցութիւն, միաբանութիւն, կորպորատիվ պատվի զգացում և գիտակցութիւն, որ մեր օրերում ամեն մի ծառայող լուծում է մեծ պատմական խնդրի մի մասը»:

Սակայն «պետական ծառայողների ապարատը» չդրսեւրեց «գիտակից և գաղափարական վերաբերմունք դեպի իրենց ծառայութիւնը» և այնպէս էլ չգիտակցեց, որ «լուծում է մեծ պատմական խնդրի մի մասը»: Պարզվեց, որ հանցավորության կառուցվածքում պաշտօնեական հանցագործությունները իրենց տեսակարար կշռով զբաղեցնում են առաջին տեղը:

Պաշտօնեական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1920 թ. հոկտեմբերի 2-ին հաստատվեց «ժամանակավոր օրենք՝ պաշտոնեական հանցանքների մասին»:

Մինչդեռ Քննչական տեղամասերում կուտակվել էին «մեծ քանակութեամբ գործեր, զլիավորապէս այնպիսիները, որոնք ունեն պետական նշանակութիւն և առաջացնում են հասարակա-

կան ուշադրութիւնը: Այսպէս, համարյա բոլոր պաշտոնեական և այսպէս կոչված «լիազորական գործերը» մնացել են առանց շարժի, իսկ մեղավորները՝ ազատութեան մեջ»:

Ձինվորական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ընդունվեց ժամանակավոր օրենք՝ «Զորքի դասալքութեան դեմ կովելու մասին»:

Հետագայում ընդունված «Զորքերի շարքերը զորակոչի մասին» Օրենքի համաձայն զորակոչարկին տարիքը 25-ից բարձրացվեց մինչև 28 տարեկան:

1919 թ. հունիսի 24-ին ընդունվեց «Օրենք՝ մահվան պատժի մասին»:

Դասալքությունը, սակայն, է՛լ ավելի անկց, և հանցավորության կառուցվածքում զինվորական հանցագործությունները զբաղեցրին իրենց ուրույն (երկրորդ) տեղը:

Այսպիսով, հանցավորության կառուցվածքը Հայաստանի Առաջին Հանրապետութիւնում հիմնականում իրենից ներկայացնում էր հետևյալ հանդադրութիւնների համակցութիւնը՝ Պետական հանցագործութիւններ. Անձի դեմ ուղղված հանցագործութիւններ. Սեփականութեան դեմ ուղղված հանցագործութիւններ. Պաշտօնեական հանցագործութիւններ. Զինվորական հանցագործութիւններ:

Ըստ տարածվածության աստիճանի հանցագործութիւնները ստորաբաժանվում էին հետև-



յալ խմբերի՝ Պաշտոնեական հանցագործու-  
թյուններ. Զինվորական հանցագործություններ.  
Սեփականության դեմ ուղղված հանցագործու-  
թյուններ (ավագակություն, կողոպուտ, զոդու-  
թյուն). Անձի դեմ ուղղված հանցագործություն-  
ներ (կյանքի և առողջության դեմ ուղղված հան-  
ցագործություններ). Պետական հանցագործու-  
թյուններ:

Օտնը հանցագործությունների անը ավելի  
զգալի դարձավ 1920 թ.՝ 1918 թ. համեմատ:

Աճում էին ոչ միայն անձի դեմ ուղղված  
հանցագործությունները, այլև պաշտոնեական  
հանցագործությունները, զուգբային հանցագոր-  
ծությունները և զինվորական հանցագործու-  
թյունները:

Հատկապես նկատվել է շահադիտական դըր-  
դումներով կատարված հանցագործությունների  
աճ:

Նշված վտանգավոր հանցագործությունների  
դիճամիկան անընդհատ աճել է:

Հանցավորության վիճակը բնութագրում են  
ոչ միայն բոլոր արձանագրված հանցագործու-  
թյունների թվերը, այլ նաև այն անձանց թվերը,  
ովքեր կատարել են հանրորեն վտանգավոր  
արարքներ: Որքան մեծ թիվ են կազմում հանցա-  
գործները, այնքան բացասաբար է բնութագրվում  
հանցավորության վիճակը: Օրինակ, հանցավո-  
րության վիճակը տարբեր է, եթե 1000 հանցա-  
գործություն կատարել են 1000 մարդ և նույնքան

հանցագործություն՝ 3000 մարդ: Հետևաբար,  
հանցավորության վիճակը բնութագրվում է և՛  
արձանագրված հանցագործությունների, և՛ դրանց  
կատարմանը մասնակցած անձանց թվերով: Այդ  
տեսակետից թվերը «վիթխարի» էին, քանի որ  
հանցագործությունները կրում էին «մասսայա-  
կան», «համաճարակային» բնույթ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթեր

22 Պետական պատմական կենտրոնական արխիվ (ՊՊԿԱ),  
Ֆ. 198, ց. 1, գ. 1:

22 ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 33:

Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 91:

Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 160:

Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 162, մաս I:

Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 162, մաս II:

Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 231:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 1:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 26:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 38(1):

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 38(2):

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 45:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 83:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 107:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 118:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 180, մաս Ժ:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 192, մաս Ժ:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 277:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 278:

Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 280:

- Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 284, մաս Ժ  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 287  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 287, մաս I  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. մաս I  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 293, մաս III  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 294  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 298, մաս III  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 299  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 300  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 311  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 490  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 576  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 580  
 Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 580, մաս I  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 28  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 29  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 39  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 107  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 117  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 118  
 Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 141  
 Նույն տեղում, ֆ. 210, ց. 1, գ. 1  
 Նույն տեղում, ֆ. 210, ց. 1, գ. 6  
 Նույն տեղում, ֆ. 210, ց. 1, գ. 45  
 Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 68  
 Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 71

**Գրքեր**

- Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: — Երևան, 1932:  
 Կիրակոսյան Զ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք երկրորդ: — Երևան, «Հայաստան», 1983:  
 Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.): — Երևան, 1992:

Հայ ժողովրդի պատմություն: Հատոր 7: — Երևան, ԳԱ հրատ., 1967:

Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ. Ռ., Հայ ժողովրդի պատմություն: — Երևան, 1979:

Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն: — Փարիզ, 1928:

Խատիսյան Ալ. Հայաստանի Հանրապետության ծագումն ու դարդացումը: — Բեյրութ, 1968:

Քաջազնունի Հովհ. 23 Դաշնակցությունը անելիք շունի այլևս: — Վիեննա, 1923:

Hovannisian R. The Republic of Armenia, v. I (1918—1919). — Berkeley, 1974.

Hovannisian R. The Republic of Armenia, v. II (1919—1920). — Berkeley, 1982.

**Քերթեր**

- Աշխատանք, 1919, 25 փետրվարի:  
 Հայաստանի աշխատավոր, 1919, թիվ 81:  
 Ավագյան Ռ. Դեպի արդար հասարակություն: Հանցավորությունը Հայաստանում 1987-1990 թթ.: — Հայք, 1993, 2, 23, 27, 30 հոկտեմբերի, 3, 6, 10, 13, 17 նոյեմբերի:  
 Ավագյան Ռ. Հանցավորությունը Հայաստանում 1991-1993 թթ.: — Հայք, 1994, 26 հուլիսի, 5, 9, 12, 26 օգոստոսի, 9, 23 սեպտեմբերի, 4, 7, 11 հոկտեմբերի:  
 Ավագյան Ռ. Հանցաշխարհի դեմքը: Փաստեր և մեկնաբանություններ: — 02 շաբաթաթերթ, 1995, 13, 20 մայիսի:

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն	3
I. Ժամանակաշրջանը՝ իշխանության ներկայացուցիչների բնութագրմամբ	13
II. Ժամանակաշրջանը՝ ընդդիմության ներկայացուցիչների բնութագրմամբ	32
III. Անձի դեմ ուղղված հանցագործություններ: Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	40
IV. Պաշտոնեական հանցագործություններ	52
V. Զինվորական հանցագործություններ	72
Ամփոփում	81
Օգտագործված գրականություն	93

Հեղինակը տպագրել է ֆրեական իրավունքի և ֆրեարևության խնդիրներին նվիրված ավելի քան 180 աշխատանք: Այդ թվում՝

Ինֆեասպանության հասցեներ որպես ֆրեոբեն պատժելի արարք:— Երևան, ԳԱ հրատ., 1971:

Բնական միջավայրի աղտոտումը որպես ֆրեոբեն պատժելի արարք:— Երևան, ԳԱ հրատ., 1975:

Բնության իրավական պահպանումը Հայաստանում:— Երևան, «Հայաստան», 1979:

Տեղական խորհուրդները և շրջակա միջավայրի աղտոտման կանխումը:— Երևան, ԳԱ հրատ., 1982:

Հայաստանի Հանրապետության ֆրեական օրենսդրությունը:— Երևան, «Արեգ», 1994:

Հայաստանի Հանրապետության արդի ֆրեական իրավունքը:— Երևան, 1995:

